




ՀԱՅԻԱԾԻՒ

1990
Տ



ԽԷ
ՏԱՐԻ

ԵԶՈՒՅԾԻ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅՑ
Ա. ԵԶՈՒՅԾԻ

Ապրիլ
1990



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՍԲԱԳՐԾԱԽՆ—Հայաստան՝ ցավ և սեր մարդկության	3
Ամենայն Հայոց Կարողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի գատկական քարոզը	6
արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում	6
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ Լինդակը Մեծ եղեռնի 75-ամյակի առթիվ	8
ՄԱՅՈ Ա.ԹՈՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր	11
ՓԱՍՏՆԱԹՂԹԵՐ 1912—1920 թթ. ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. (Հայաստանի Պետական Արխիվից)	13
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Պատմական մի լոնդակ	45
ԱԳԱՊԻ ՆԱՍԻԿԵՑՆ—1915 և անգլիացի հայասէրները	50
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ—ՂԱԶԱՐՈՍՅԱՆ—Տան Կիլիկիո Կարողիկոս Սահակ Բ-ի ազգասի- րական գործութեալունը և կիլիկիանայությունը	56
«ԷՇՄԻԱՋԻՆ» օֆիցիալին ժուրնալ Էշմիածնի Կատոլիկոսата	61
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	68

ԽՄԲԱԳԻՐ՝ ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՇՄԻԱՋԻՆ
«ԷՇՄԻԱՋԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Արմանական Հայաստան, Էշմիածն, Ռեդակուն ժուրնալ «Էշմիածն».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS


Հանձնված է արտադրության 11.07.1990 թ.: Ստորագրված է տպագրության 5.09.1990 թ.:
Տպագրական 4 մամուլ+3 մերդիր, յուղը 60×84^{1/8}, պատվեր 842:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1990 թ.,

ՀՐԱՄԱՆ ԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՃԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵԽԱՑՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԱՎ ԵՎ ՍԵՐ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ

1915 թվական: Արդեն 75 տարի:

Նորից կանգնած ենք մեր ժողովրդի պատմության ամենամռայլ թվականի առաջ: Այս անգամ, սակայն, մեր կեցվածքը ավելի խրոխտ է ու հուսով առավել արծարծ: 1988 թվականից մասամբ Սորցախյան շարժումը զարթոնք պարզեց մեր ժողովրդին ամենուրեք: Զարթոնքը կամքի և վճռակամության՝ տնօրինելու սեփական ճակատագիրը: Զարթոնքը ոգու և ազգային արժանապատվության՝ կերտելու սեփական պատմությունը և, հոգևարքի մեջ անգամ, իր հոգու կրակից մի կայծ բաշխելու աշխարհին՝ այն մի քիչ ավելի լուսավոր ու մարդասեր դարձնելու համար: Եղել է մոռայլ ժամանակ ու եղեն է եղել, բայց հառնել է ազգը, պեծը կայծ է դարձել, կայծը՝ կրակ, ու կրակը՝ բռրբռք հուր, և այդ բռրբռք հուրով պոռթկաց հայ հոգին, Հայաստանի հոգին, հավերժության ոգին:

1965 թ. Մեծ եղենի հիմնամյակի իր սրբազն կոնդակում ի՞նչ իմաստուն ընդհանրացում կատարեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

«Մեր հինասուրց ազգի պատմութիւնը | Կենդանի | յուշարձան մըն է, մարդկային աշխարհին հորիզոնին վրայ բարձրացող, շաղախուած ու մարմին առած նահատակներու արիւնով, բարիին ու գեղեցիկին | ծառայելու ստեղծարար հանճարով և սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազն կիրքով, այն օրէն մանաւանդ, երբ Աւետարանի լոյսը իշտ ի Հայաստան աշխարհ: Քրիստոսի Աւետարանով/հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխատանքին...»:

Ու Քրիստոսի Եկեղեցին՝ Հայաստանյաց Սուպերական Եկեղեցին, մշտապես կիսեց իր հավատացրալ հոտի տագմանը ու ուրախությունը, իր լուսամիտ հայրապետների ողջախոն պատգամներով փրկության ուղի նշեց

ազգի ամենածանր օրերին, վաճռերի կիսախավար խուցերում առկայժ սրբնեց լուսավորության ու մշակույթի ճրագը և այդ առկայժ լուսը դարձրեց հոյս ու հավատք ապագայի նկատմամբ: Թեկող միայն այս դերի համար հայ մարդը պաշտամունք այսոք է տածի Հայաստանյաց Սուարելական Եկեղեցու նկատմամբ: Եկեղեցին երբեք չքեց իր հոտին, ու դեռ երկար կուտեսկցի մեր ժողովուրդի պատմությանը: Եկան նոր թշնամիներ, նայեցին Արարատի մեջ ճակատին ու անցան: Նրանցից ոմանք անհետացան պատմության մոյք քավիդներում, իսկ հայ ժողովուրդը իր ոգու առկայժ ճրագը սրբնեց անմար և վերջին մոտ-վեցհարյուրամյա պետականությունից գորկ գոյավիճակից հետո հասալ համաշխարհային բուն աղեկոծումների ժամանակաշրջան: Կործանվում էին դարավոր կայսրություններ, փոփոխվում էին համամարդկային արժեչափները, և թվում էր, թե որ է կմնչի ժողովուրդների ազատության շեփորը: Բայց պայթեց համաշխարհային պատերազմը: Առաջինը, որ իր ընդգրկումով սպառնաց ողջ քաղաքակիրթ աշխարհին: Խախտվեց ուժերի հավասարակշուրջունը և պայթեցին թնդանութները: Մթագնեց երկնակամարը և հայոց երկնքի վրա, որովհետու Օսմանյան կայսրությունը իր հոգեւարքի ջղագումների մեջ հաշվեհարդար էր տեսնում ազգային փոքրամասնությունների հետ: «Հայկական Հարցը» վաղուց դարձել էր միշագգային քաղաքականության լճակներից մեկը: Ուրեմն և հայ ժողովուրդը դառնում էր միշագգային քաղաքականության հիմնատարրերից մեկը, և այդքանով անցանկայի Օսմանյան կայսրության քաղաքական հեռագնա ծրագրերի համար: Փոխվեց համեյան քացարձակատիրությունը, բայց չվերացավ նախառակը: Օսմանյան փոփովով կայսրությունը դարձավ ավելի թուրքական, սուսակ ազգայնական և անհամեմատ ավելի նպատակալաց: 1914 թ. օգոստոսյան պատերազմը ստեղծեց լավագույն պայմաններ լուծելու գոնե ժողովիայի ներքին խնդիրները, հաշվեհարդար տեսնելու ազգային փոքրամասնությունների հետ:

Խսկ արդարացման առիթը կար. հովները դուռ էին բացում քրիստոնյա աշխարհի միշամտության ազգայնամոլ ժողովիայի գործերին, հայերը ուստամետ էին և կարող էին օգնել թշնամի Ռուսաստանին իրականացնելու իր դարավոր երազանքը՝ իշնելու դեպի Միշերկրական: Ռուսական «Տաք ջրերի» քաղաքականությունը կարող էր լուծել ամեն մի շեշտակի հարձակումով: Ուստի պետք էր «հայերից և հովներից դատարկել» Ռուսաստանի հետ ճակատային գիծը: Խակ այդպիսի ճակատային գիծ էր ամրող Արևմտյան Հայաստանը: Այստեղ այլընտրանք չկար. առկա էր պայմանը՝ պատերազմական խառնաշիոթ: Աերկա էր հանցանազմը (հաչու աշխարհի՝ արդարացուցիչ դեպք հանցանաց)՝ ուստափրության, իրագործվում էր ծրագիրը՝ «չկա հայ, չկա Հայկական հարց»: 1915 Ապրիլի 24-ը միշնարարն էր միայն հայաշինչ քաղաքականության այն շղթային, որ հյուսվեց Սասունի ու Սերանայի շարդերով, գոյառավ Բաքվով ու Շուշիով՝ ընդգրկելու համար ամրող Արևմտյանաշխատանը, հանգելու համար Սումգայիթին ու 1990 թվականի հունվարի 18-ի Բաքվին: Այստեղ նույնպես Հայ Եկեղեցին անբաժան մնաց ժողովրդի ճակատագրից: Բազմաթիվ հոգևորականներ նահատակվեցին, ու շատեր Սարդարապատի մարտերում կունցին լքյալ ժողովրդի նոր հաղթանակը: «Վառեցան զինու հոգոյ արիար ընդդեմ մահու»:

Այսօր 1915 թ. Ապրիլի 24-ի Մեծ Եղեռնի 75-ամյակի առաջ անհմատ է այլևս որոնել արդարացում կատարվածի կամ ժխտել այն, ինչ ապացուցված է հարյուրավոր փաստաթղթերով, վավերագրերով, պատկերներով ու գրքերով։ Եվ իթթիհատական ազգայնամոլների այսօրվա հետնորդները գոնե Պիղատոսի բաջությունը չտնեն իրենց ձեռքերը լվալու հայ ժողովրդի արյունից («Եղել է, բայց մենք չենք եղել» չըմեղանքով), սակայն պատմության դատաստանի առաջ ոչինչ անհաղթելի չէ, և արդարությունը միշտ գալիս է, թեկուզ ուշացած։

Մեր հույսը մենք ու մարդասերները։ Մարդասիրությունը քաղաքականություն չէ, գիտենք, բայց մարդկությունը առավել մարդասեր է դառնում օր առ օր, և դա լավ հույս է։ Վեա 1988 թվականի ահեղ երկրաշարժը։ Երկրագունդը ափերի մեջ առավ աղետալ Հայաստանը, Հայաստանը դարձավ մարդկության ցավը, ու հաւատանք, որ Հայաստանը մի օր կդառնա մարդկության սերը, ու կապաքինվեն մեր վերքերը, ու գայլն անգամ կլիզի թաթերն ու դարավոր արյան գարշահոտ կզգա իր ժամփների տակից, քանզի մարդկությունը իր այս փոքր ածուից միայն հոգու շռավություն է տեսել, համաշխարհային մտքի անդաստանում ափուած գեղեցիկի պաշտամունք է տեսել, ու պիտի գուրգուրա նրան ու անվտանգ պահի, քանզի մարդկության հոգու շերմության մի կայծն էլ հայ ժողովրդի ոգու արգասիքն է։

Սրդեն 2000 տարի է, Քրիստոսի Ավետարանը հնչում է այս բարձր լեռներում տարերքի ու արհավիրքի պահերին։

Եվ այսօր ժողովուրդը նոր եռանդով ու հույսով հայացքը սկսել է դեպի Եկեղեցին, և Մայր Եկեղեցին հուսախար չի անի իր զավակներին։ Ամենայն Հայոց Հայրապետը իր ողջախոն գգունությամբ հնկում է իր հոտի անդրորը՝ աղոթելով առ Աստված, որ մարի կրակն այս տագնապահարույց, և սեր բաշխի մարդկանց մեր փոքրիկ ածուի նկատմամբ, որն իր ողջ պատմությամբ մարտակիցն է ճշմարտության և արդարության։

Իսկ Եղեռնի 75-ամյակին Ամենայն Հայոց Հայրապետը վճռակամ պատգամեց։

«1915-ի ցեղասպանութեանը զոհ գնացած հայոց հոգիները այսօր մեզ հետ են և միանում են մեր աղօքքներին, մեր մաքառումներին։ Նրանք քաջակերում են ու օրացնում մեզ և պատգամում բոլորին՝ անշեշ պահել նրանց ոխտը, ամուր պահպանել մեր ազգային հաւատամքն ու հաւաքական կամեցողութիւնը, միասնական ուժերով չաղթահարելու համար մերօրեայ դժուարութիւնները, գործելով ողջմտութեամբ ու հեռատեսութեամբ, երբեք մոռացութեան չտալով անցեալի մեր կործանարար փորձութիւնները»։





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈՉԸ ԱՐՏԱՍՍՆՈՒԱԾ
ՍՈՒՐԲ Էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ
(15 ապրիլ 1990 թ.)**

**«Յանուն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ, ամեն»:
«Քրիստոս յարեա ի Խոնելոց», ձեզ և մեզ մեծ աւետիս:**

**Սիրեցեալ հաւատացեալներ Մեր ի Հայատան և ի ափիոս աշխարհի,
Այսօր Ամենայն Հայոց Սուրբ Խօմիածնեն, բերում ենք բոլորիդ հրա-
շալի աւետիսը թէ՝ ճշմարտապէս «յարեա Քրիստոս ի մեռելոց և մեզ
զկեանս պարզենաց»:**

**Այսօր լուսաւորում են աշխարհի բոլոր հորիզոնները Սուրբ Յարտր-
եամ շնորհներով, զի Քրիստոսի ամենափրկիչ աւետիսը զովերգում են
երկնքի հրեշտակները, իսկ երկրի վրայ փառաբանում են բոլոր չուսացեալ
մարդկանց հոգիները:**

**Այսօրուայ տօնը մեր խորտերում արթնացնում է այն անասեի ուժա-
խորհինը զոր ասպեցին խղաքնը կանաք, Յիսուսի դատարկ գերեզմանի
առաջ: Սրբնացնում է այն փրկարար յոյսը թէ՝ «որպէս Աղաման ամենե-
քին մեռանին, նոյնպէս և Քրիստոսով ամենեցեան կենդանացին» (Ա.
Կորնթ. ԺԵ 22):**

**Մեր յոյսը մելառվ հանդերձ յարոցեալն Քրիստոս, այսօր չենք կարող
չտեսնել այն վերիվայրումները, այն փորորիկները որ կուտակում են աշ-
խարհի ճանապարհների վրայ: Հետզինուէ զավի է դատնում թէ մեր երկ-
րագունդը զլուրում է դեպի ողորտը աւելի տագեապալի իրավիճակների,
ոյի ամեն տեսակի անհայտեսելի հեռանկարներով:**

**Յաճախ մղում ենք մտածելու թէ մեր օրերի մարդկութիւնը չի կարող
ինքն իրեն ղեկավարել բաւարար իմաստոթեամբ: Ներկան անապահով
է, իսկ ապագան անորոշ: Դեպի ո՞ւր է զնում մարդկային աշխարհ...:**

Այս կացութեանց առաջ կանգնած, արդեօք ժամանակը չէ՝ որ հին

խոստումներից յուսախարք բազնութիւնները, իրենց դէմքը դարձնեն դէպի դատարկ գերեզմանը Յիսուսի, դէպի լոյսերը այդ գերեզմանից ճառագող։ Մեր աղերսն է այսօր, որ Քրիստոս նոր լոյս սփորի մեր օրերի՝ նոր ուղիւնքը որոնող մարդկութեան վրայ, զի նա յաւետ մնում է «ճանապարհ, ճշշմարտութիւն և կեանք» (Յովհ. ԺԴ 6):

Մեր օրերի ալեկոծ աշխարհի չրերի վրայ նաևարկում է նաև մեր փոքր ազգի դիւրաբեկ նար ի Հայաստան, ուր գոյատնում է մեր ժողովրդի մայր զանգուածը։ Հայաստան, քար ու լոյս մեր աշխարհը, ուր հայերը ապրում են ու մաքառում իրենց նախնեաց քրիստոնէական հաւատքով, իրենց ազգային ինքնութեան գիտակցութեան նոր զարթօնքով, իրենց կապոյն երազանքներով, իրենց՝ ինքնիշխան ու ազատ ապրելու կամքով։

Քրիստոսի Յարութիւնից յետոյ, Սուրբ Հոգոյ էջքը հրեղէն լեզուներով՝ առաքեալների ու ազգերի վրայ, յորի հրդանշում է ոչ միայն գաղափարը՝ Եկեղեցոյ մէջ բոլոր ազգերի միաւորման ու Եղբայրութեան, այլև աստուածային կամքը և տնօրինումը՝ որ ազգութիւնների փոխադարձ սիրոյ միութեան մէջ, անաղակու պահպանուի ամէն մի անհատ մարդու և ամէն մի ազգութեան ոգեկան ինքնութիւնը, շնորհուած բոլորին հաւասարապէս Սուրբ Հոգոյ ճառագայթումով։

Այս դաւանանքը եղել է ու մնացեկ նաև մեր Մայր Եկեղեցու, մեր ազգային Եկեղեցու գոյառնան և պատմական զարգացման ուղին։

Քրիստոսի Եկեղեցին տիեզերական է, և Հայ Առաքելական Եկեղեցին իր ազգի տահմանների մէջ իրականացնում է այդ տիեզերականութիւնը ստեղծագործուն, իրեն յատուկ ազգային ինքնուրոյն ձների մէջ։

Զի իրեն ազգութիւն, այսինքն՝ իրեն ոգեկան, մշակութային և բարուական գոյառում, մեր ժողովուրդը ծնունդ է առել ու Կազմաւորուել Քրիստոսի Յարութեան լոյսի դրոշմամբ և պատմականօրէն մարմին առել ու բիւրելացել, մեր ազգային Եկեղեցու ու ազգային մշակոյթի անկորնչելի արժէքներով։

Բոլոր լոյսերի լուսաբացի այս զատկական առաւօտեան, երբ մեր ողջ ազգը ինք ևս, ի Հայաստան և յարտասահման, տառապում է արդարութեան ծարաւով, Մենք մեր աղօթքն ենք վերառաքում առ Փրկիչն մեր Քրիստոս որ լուսաւորի նրա ճանապարհը և զօրացնի նրա զաւակների սիրուն ու հոգին իր կենարար Յարութեան շնորհներով, զի «Երանի որ բաղեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե 6):

Արդ, սիրեցեալ ժողովուրդ մեր, Փրկիչն մեր Քրիստոսի լոյս յարութեամբ «Բնաւատով արդարացուած, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ հետ... այլ պարծենանք մեր նեղութիւնների մէջ ևս, քանզի գիտենք որ նեղութիւնները՝ համբերութիւն են բերում, համբերութիւնը՝ փորձ, փորձը՝ յոյս։ Եւ լոյսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստուծոյ սէրը սփռուած է մեր սրտերում Սուրբ Հոգոյ միջոցով» (Հովհ. Ե 1—5):

Շնորհը յարուցեալ Փրկիչն մերոյ Յիսուսի Քրիստոսի նոյնիցին ընդ ձեզ. ամէն։




ԱՄԵՆԱՑՆ ՀՅՈՅՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԵԾ ԵԼԵՌՆԻ 75-ԱՄՅՅԱԿԻ ԱԹԹԻՎ.

ՎԱԶԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՄԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՄ,
ԵՊԻՍԿՈՊՈՍՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՌ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՄՐԲՈՅ ԷՉՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՍՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՄԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ՊԱՏՐԻԱՐքԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ
ՀԱՅՈՑ ՄՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԹՈՐԳՈՄԱՅ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՄԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ
ԱՐՔԵՊԻԿՈՊՈՄԻՆ, ՀԱՄՈՒՅՆ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՄԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՄԱՅ, ՎԱՐՈՒԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
ՄԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՈՅ ԵՒ ՊԱՅՏՈՎԵԻՑ
ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ


Այսօր 24 Ապրիլի 1990 Փրկչական ամի, մեր համայն հաւատաւոր
ժողովուրդը, Մայր Հայաստանից, Արցախի բարձունքներից և Սփիտքի
տարածքից հոգկիճ քայլում է լուր ու ինքնամփոփ դէպի Ծիծեռնակարերով



ՄԵԾ ԵՂԵՐԻՆԻ ՍՊՈՐԻ ՆԱՀԱՍԱԿԱՆԵՐԻ ԱՆՄԵՌ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ԱՀԱՄԱՐ ԿՐԱՎԻ ԱՌԱՋ

(24 ապրիլ, 1990 թ.)

ՄԵՐ ԵՂԵՐԻՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՀՈՎՆԱՆԱԳԻԱՏ ՄԱՅՐ ՏԱՅԱՐ ԾՐՁԱՓԱԿՈՒՄ
(24 ապրիլ, 1990 թ.)



քաղաքամայր Երևանի, իր կրծքի տակ ծրարած մեծ վիշտը երկու միլիոն իր հարազատների, որոնք նահատակուեցին 1915—1923 տարիների ընթացքում Օսմանեան կայսրութեան տարածքի վրայ, ծրագրումովը և գործադրումովը «Երիտ-Թուրք» ղեկավարների:

Մեր Մայր Եկեղեցին, մեր ազգը ամբողջ այսօր վերստին ապրում են զարդուրանքը մեր պատմութեան Մեծ Եղեննի ու աղօթում զոհուածների հոգիների համար. և ուստի նև անում սուրբ պահելով նրանց նահատակութեան լիշտավակը ու հաւատարիմ մնալու նրանց լոյս երազանքներին:

Արևմտահայերի ցեղասպանութիւնը, Երիտ-Թուրք ազգաբնամոլ ղեկավարները ծրագրեցին և ի գործ դրեցին, նախառակ ունենալով բնաջնջել ամբողջ մի ազգաբնակչութիւն, բաց անելու համար ճանապարհ դէպի իրականացումը համաթորքական մի կայսրութեան: Այդ խաւար ծրագրին զոհ գնաց պատմական Հայաստանի արևմտեան հայութիւնը:

Փրկուեց միան Արևելեան Հայաստանի ազգաբնակչութիւնը, շնորհի Սարտարապատի Մայիսեան Յաղթանակի և ստորագումով հայ նորագոյն պետութեան, 1918 թուին, որը նոր պալմաներում գոյատևում է մինչև մեր օրերը, հանդիսանալով միակ խարիսխը հայ ժողովրդի գոյատևման նգրաւականը նրա պետականութեան ամրապնդման Արարատի փէշերին:

Հայոց կոստորածների 75-ամեակի սեմին, մեր Եկեղեցին ոգեկոչում է իր ժողովրդի նահատակում՝ աղօթքով ու աղերսով առ Աստուած, որ նրանց լիշտավակը յաւետ պայծառ մնայ Երկնային արքայութեան մէջ ու նաև երկրի վրայ՝ յաւերժ անմոռաց, որպէս ոգեղէն մի յուշարձան սգոյ և վերածննդի:

Այսօր, մեր պատմութեան մեծագոյն արհաւիրքը ոգեկոչում ենք մեր հայրենի կեանքի տագնապալի ներկայ վիճակում, երբ ողբում ենք նաև նոր զոհեր, պատմական Արցախի մեր զաւակների արդար պայքարի ճանապարհին:

Աստուած է վկայ, քաղաքակիրթ ողջ մարդկութեան խիճն է վկայ, որ Արցախի հայերի ազգային ազատ ինքնորոշման իրաւունքը Մայր Հայաստանին միանալու, թէ արդար է, թէ օրինական և թէ համաձայն մարդու իրաւունքների հրամայականին:

1915-ի ցեղասպանութեանը զոհ գնացած հայոց հոգիները այսօր մեզ հետ են և միանում են մեր աղօթքներին, մեր մաքառումներին: Նրանք քաջալերում են ու զօրացնում մեզ և պատգամում բոլորին՝ անշեշ պահել նրանց ուստը, ամուր պահպանել մեր ազգային հաւատամքն ու հաւաքական կամեցողութիւնը, միասնական ոժերով յաղթահարելու համար մերօնեայ դժուարութիւնները, գործելով ողջմտութեամբ ու հեռատեսութեամբ, երբեք մոռացութեան շտապով անցեալի մեր կործանարար փորձութիւնները: 1915-ից յետոյ, հայ ժողովրդին ներեկի չէ սխալ կողմնորոշուել, քանզի արդի մեր Մայր Հայրենիքի քաղաքական անվտանգութիւնն ու տնտեսական զօրացումը խորհրդացին բազմազգ ինքնիշխան ազգութիւնների ընտանիքում, գերազոյն երաշխիքներն են մեր ազգի ապագայ գոյատևման:

Մենք նոյնիսկ յուսով ենք, որ կը գայ այն օրը, երբ աշխարհի ժողովուրդները, նաև մեզ հարեւան թուրք ժողովուրդը, մեզ հետ կը խոնարհուեն հայոց նահատակների լիշտավակի առջև:

«Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ, լիշեա զիոգիս բիւրաւոր նահատակաց մերոց և դասաւորեալ պայծառաց զնոսա ընդ սուրբս քո, զի դու ես դատաւոր կենդանեաց և մնոելոց:»

Այսու Մեր կոնդակով հրաւեր ենք կարդում մեր եկեղեցիներին ի Հայաստան և ի ափինս աշխարհի, որ տարւոյ 24 Ապրիլին կատարուեն համեմատոր արարողութիւններ Սուրբ Պատարագի և հոգեհանգստեան՝ ի խաղաղութիւն ու ի լուսաւորումն ցեղասպանութեան զոհ գնացած հայոց հոգիների և ի մսիթարութիւն մեր սպակիր ժողովրդի:


«Զարթիր և հայեաց, Տէր, իրաւուն իմ, ի դատաստան իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում (Սաղմոն 17—28), զի հզօրիչ իմ և ապաւեն իմ դու ես» (Սաղմոն 1—4): Ամէն:

Կայ Ձե Դ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի Յ Մարտի
1990 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌԽՎԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1671





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ՀՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի.—Գալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Սուրբիան արդ. Տերտերանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 12-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քին. Բաղրամյանը:

* * *

Ապրիլի 14-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ: Ծրագալոյց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 15-ին, կիրակի.—Զատիկի: Յարութիւն Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր և պատարագ մատուցեց Ամենա-

Ապրիլի 8-ին, կիրակի.—Մաղկագարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ուսաննա Բարձրելոյն, օրինեալ որ գասդ յանուն Տեառն» (Մարկ. ԺԱ. 9) բարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Աալն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռեց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

* * *

Ապրիլի 22-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մարեկ քհն. Մատորյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը՝ «Նոր խորանիդ արեգական արդարութեան նոր օրինութիւնս տացուք և անդադար փառաւորեացուք» (Շարական) բնարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 24-ին, երեքշաբթի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան լլնթաց Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայատան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Նաթան վորդ. Հովհաննելիսանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագի հայր սուրբ ընթերցեց Վեհափառ Հայրապետի: Մեծ Եղեննի 75-ամյա տարեկիցին նվիրված կոնդակը (տես էջ 6):

Հավաքար պատարագի նահատակաց հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

* * *

Ապրիլի 29-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վորդ. Զաքյալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Յովհ. Գ 5) բնարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՆՈՐԱԿԱԶՄ ՍԿԱԼՈՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ

(19 ապրիլ, 1990 թ.)



ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
1912—1920 թթ. ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ)

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
№ 659

(ՍՏԱՑՈՒԱԾ) 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1912 Թ.

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՈՍՊԵՏ

Հայրական հոգածութիւնն, որով Զեր Վեհափառութիւնն իր հեռագրով հրամայած էր մեզ տեղեկութիւն հաղորդել փութով Հայաստանի մերազմէից վիճակին վրայ, շնորհապարտ թողոց զմնզ և միանգամայն սրտապնդեց, յոյս ներշնչելով որ կարելի պիտի լինի ուր որեմն Զեր աղօթից և օժանդակութեան շնորհի հնարել դարմանն այն չարեաց, որ կ'սպառնան մեր ազգային էութեան: Կ'սպասէնք ազգովին և լի յուսով որ Օսմանեան Սահմանադրութեան հոչակումէն ետքը, որ քանդեց հայոց արեամբ ողողուած բռնապետական նախորդ դրութիւնը, այլև վերջ գտնեն այդ անլոր չարիքները, սակայն ցաօք սրտի կը հարկադրուինք հաստատելու որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստար փոփոխութիւն չ'կրեց, և Ատամայի ահաւոր կոտորածով սկսաւ այնապի նոր շրջան մը, ուր անպական եղան ամենուրեք նորանոր չարագործութիւնը, որոց ի մասնաւորի թատր դարձան վերջերս Վանայ, Աղջամարայ, Բաղէշի, Մշոյ և Սղերտի վիճակները: Նոր ի նորոյ հասած հեռագրեր գումարին սպաննութեանց, աւարառութեանց, առևնանգումներու դէպքեր, և բռնազրուիկ իսլամացումներ, նոյնիսկ անշահիմանելու, որք տեղական իշխանութեան պաշտօնէից աչքին առջև և անոնց անտարերութեան, չ'ըսենք գաղտնի համամտութեան կամ մեղսակցութեան շնորհի ի գործ կը դրուին մերազմէից դէմ, որ անզէն ու անպաշտպան կը գտնուին խուժովս ու զինեալ խուժանին առջև, խաղալիք թողուած անոր մոլուանդական վայրագ կրից, որ դեռ ծարաւ ունի իր երեմնի կոտորածներուն և աւարմերը շարունակելու, և կ'սպառնայ սպառապուտ չքացնելու հայ ժողովուրդը, եթէ անմիջական ու իրական միջոցներ ի գործ չ'դրուին պաշտպանելու համար զայն:

Քանի, քանի անգամներ Բ. Դրան ուշադրութեան և տնօրէնութեան եերկայացուած էր արդէն՝ հայարնակ նահանգներու ողբայի վիճակը, քանի քանի թագորի մասուցուած են Բ. Դրան, թէ՛ նողային գրաւմանց խնդրոյն կարգադրութեան համար, որ երկրագործ ժողովուրդը գրկած է իր ապրուտի միջոցէն, և թէ՛ այլազան հարստահարութեանց վերջ տրուելու խնդրա-

նօք, և խոստումներ ընդունուած, որպիսիք են՝ Կիսազօր Հանձնաժողով կարգել, ամէն ինչ ի տեսլոց քննելու և ի գործ դնելու համար արդարութիւնը, զինուորական օրորթիւն դրկել՝ զայելու համար շարագրործներու ոհմակը, բայց այս խոստմանց և ոչ մին գործադրուեցաւ, մինչև որ իրերն եկան հասան ներկայ դատնագիտն վիճակին, որ հարկադրուեցանք վարչական պատգամառութեան մը հետ դիմել Տէրութեան բոլոր նախարարաց, պարզել իրաց վիճակն, և այս անգամ դատնացած հոգուվ ու ճարահատ, բուռն կերպով բողոք բառնալ ա'յն շարագրործութեանց մասին, որ նոյն իսկ սահմանադրական կառավարութեան մ'օրով ի գործ կը դրոին բազմաշարչար ժողովուրդի մը դէմ, որու բաժին եղած է միշտ տառապիլ իր հայրենին հողին վրայ, և ասկայն ընդհանուր երկրին զարգացման ու քաղաքակրթութեան մէկ օրեղ ազդակն եղած է, կատարելով իր քաղաքացիի ամէն պարտականութիւններն, և միշտ այս Տէրութեան բարգասաման ու զօրութեան մէջ փնտուելով իր օգուտը: Ըստ տվյալնահին դարձեալ խոստումներ եղան ագդու հրամաններ ուղղելու գաւառական իշխանութեանց, պատժելու և զավելու շարագրութեարը՝ հրամաններ՝ զորս փորացինք հաղորդել մեր Առաջնորդարաններուն և սակայն ի պատափան Մուշէն, Բաղէշէն և Սղերտէն գործարեր հետագրեր հասան մեզ նոր ի նորոյ, ճանուցանող թէ ո՛չ մէկ գործադրութիւն տեղի չէ՝ ունեցած, թէ՝ վիճակն կը շարունակէ և թէ՝ ժողովուրդըն մատնուած է նոյնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին:

Ահասախկի, Վեհափառ Ս. Հայրապետ, այս է Թուրքիոյ Ձեր հօտին վիճակը, յարաւու կեղեքու, անվերջ և անասնի տառապանք, անմեկնելի անտարբերութիւն կառավարութեան կողմէ, լուզմունք ազգին մէջ, արտասահմանի ազգայիններու կողմէ ալ բողոք և առաջարկ, դիմելու որ որ ամէկ է և հասկցելու մեր վիճակը, լույս ընել տալու մեր աղերսը և դարման մը ձեռք բերելու համար:

Ձեր Վեհափառութեան հրամանին համաձայն պարզելով իրաց այս վիճակը, ճախ պարտասոր կ'զգանք զմեզ Ձեր Վեհափառութեան յայտնելու թէ ինչպէս մեր նախորդներն, նոյնպէս և մենք չենք թերացած կատարելու մեր պարտականութիւնը և հետապնդելու, կենաց, ընչից և պատույ ապահովութիւն հաստատել տալու համար հայրենակ նահանգաց մէջ, և յետոյ ըստ որում մեր ձեռք առած միջոցներն այլև ապահովութիւն չեն ազդել մեզ փափառուած արդիւնքը յառաջ բերելու, ըստ որում Ձեր Վեհափառութիւնն իր Հայր Հաարակաց՝ կը պահանջէ մեզմէ: իր հօտին անդորրութիւնն ու ապահովութիւնն, և ըստ որում իր բարձր դիրքով և պաշտօնական յարաբերութեանց դիրքութեամբ և ընդհանուր կացութեան գիտակցութեամբ ի վիճակի կը գտնուի մեզ տալու կարևոր հրահանգներն, կը խնդրենք որ շնորհ բերեք մեզ հաղորդել Ձեր խորհուրդն, որով կարելի պիտի լինի որոշել ա'յն ուղղութիւնն, որու հետևի բանաւոր և գործնական կրնայ լինի և սատարել իրաց ելք մը գտնելու, որով և փրկելու զմեզ թէ՝ ազգին և թէ՝ Ձեր Վեհափառութեան առջև պատասխանատու մնալու դժբախտ հարկէն, և նոյն իսկ խորհի խայթէ, զոր կ'զգանք հանապազը, տեսնելով Թուրքիոյ Ձեր հոգնոր հօտին տառապանքն, անոր անհացման համար ի գործ դրուած անողոքելի ծրագիրը (ընդգծում՝ խմբ.), և մեր աղերսներուն և բողոքներուն ապարդին մնալը:

Ակն ունելով, որեւմն, Վեհափառ Ս. Հայրապետ, ստանալ Ձեր Վեհափառութեան հրահանգներն, կը մատուցանենք գաւառներէ վերջերս հասած

Թեուագրերուն և Բ. Դրան մատուցուած քանի մը թագրիրներու հայերէն թարգմանութիւնը և կը խոնարհինք ի համբոլլ Ս. Աջոյն հասարակաց հօրդ հոգևորի:


Մնամք խոնարհ որդի Ձեր Վեհափառութեան

**ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ
ՅՈՎՃԱՆՆԵՍ ԱՐՔԵՊՈ. ԱՐԵԱՐՈՒՆԻ**

4 սեպտեմբեր 1912

Գ. 15, թ. 31—33





Մատնաւոր (առանձնաբար)

26 Սեպտ. 1912 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱՁԱՆ ԵՂԲԱՅՐ և ՔՐԻՍՏՈՍ

Հեռագրական տեղեկութիւնները չափազանց ցաւալի կերպով են նկարգրում մեր ժողովրդի վիճակը Տաճկա-Հայաստանում։ Չեր Ամենապատութեան սեպտեմբեր 4 թուակիր գրութիւնը ներփակեալ թաքրիրով հաստատում է Շոյնը, որ մե՛ծ վիշտ և կակիծ պատճառեց մեզ, Ս. Էջմիածնի միաբանութեան և Կովկասահայ ժողովրդին։ Այս առջի ստացել ենք Ռուսաստանի զանազան քաղաքներից, նոյնպէս Ամերիկայի և Եգիպտոսի հայերից ցաւակցական հեռագիրներ, որոնք բոլորն էլ օգնութիւն են հայցում, խնդրելով մեր միջնորդութիւնը։ Ինչ որ մեր Հայրապետական պարտքը թելադրում է տանջանքների ու հարստահարութեանց առաջն առնելու համար, մենք անշեղ կ'կատարենք յօգուտ մեր սիրելի զաւակների։ Այս կողմից միանգամայն աներկրայ եղեք։

Քաղաքական պայմիսի բարդ և խառն պայմաններում, Ամենապատի եղբայր, զգուշութեամբ և հեռատեսութեամբ քայլեր անելը գործի յաջողութեան կէսն է։ «Ինչպէս լրագիրներից տեղեկանում ենք, Տաճկաց կառավարութիւնը սիսալ ենթադրութիւն է անում, որպէս թէ Տաճկաստանի հայերը դիմում են օգնութեան օտար պետութեանց, յումերն իսպատ կտրելով Տաճիկ կառավարութիւնից։ Այդ սիսալ ենթադրութեան իրքն հիմք, հաւանական է, ծառայել է այն հանգամանքը, որ արտասահմաննեան հայերը լցուած արդար ցասումով, յուզուած իրենց եղբայրների և քոյլերի վրայ գործած սուկալի տանջանքների պատճառով, դիմել են մի քանի տեղերից Բերինի վեհաժողովի 61-րդ յօդուածի հիման վրայ երրոպական մեծ պետութեանց, աղերսելով, որ հայաբնակ գաւառներում մտցնել տան բազմից խոստացուած բարենորդումներ, որպէսզի հայի կեանքը, պատիւն ու գոյքը ապահով լինի։ Ընդհանրապէս պէտք է աշխատել հասկացնել Տաճիկ կառավարութեան բարձրաստիճան ներկայացուցիչներին, նախարարներին, որ Դուք և Տաճ-

կաստանում ապրող հայերը պատասխանատու չեն այն քայլերի և դիմումների համար, որ արտասահմանի հայերը ինքնարերաբար կատարում են: Անշուշտ հայերը գոյն և որպասի կ'իմեն, եթէ Տաճկաց կառավարութեան ներկայացուցիչները, ըմբռնելով իրենց երկրի շահն ու պետութեան բարգաւաճման խնդիրը, կարողանային կարգ ու կանոն մտցնել գաւառներում, վերջ դնել քրդական խժդութեանց ու կառավարական պաշտօնեաների խնդաւոր անտարբերութեան և հայ ժողովրդի պատիը, կեանքն ու գոյքը միանգամյան ապահովել և օրէնքի ու արդարադատութեան առաջ հայերին և հաւասար ճանաչել, որ, դժբախտաբար, ցարդ չենք տեսնում:

Հիայոյս ենք, որ Դուք, Ամենապատի եղբայր, և Ձեզ գործակցողներն այժմեան պատասխանատու քաղաքական պայմաններում կ'վարուեք հեռատեսությամբ, անարդարութեանց և հայ ժողովրդի կրած տանջանաց դէմ բողոքելով օրինական ճանապարհով, մինչև որ Աստուծոյ այցելութիւնը հասնի հայ բազմաչափար ազգին:

Հաճեցէք միշտ պարբերաբար տեղեկութիւններ տալ մեզ մեր ժողովրդի դրութեան և Ձեր արած քայլերի մասին, ուղարկելով կառավարութեան ներկայացրած Ձեր գրութիւնների և թաքրիբների պատճենները:

Ի նկատի ունենալով, որ թաքրիբների մէջ գործ են ածում մահմեդական իրաւունքին յատուկ իրաւաբանական հասկացողութիւններ և բառեր, բարեհամեցէք ուղարկել հայերէն լեզուով գրած թաքրիբների հետ նաև ֆրանսերէն թարգմանութիւն, որոնք 1911 թ. փետր. 14-ից յետոյ ներկայացրել էք և այսուհետև ներկայացնելու լք Տաճկաց կառավարութեան:

Որպէս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս և պետ Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ, անհրաժեշտ քայլեր կատարում ենք դըժքախտ զաւակներին անտանելի վիճակը թեթևացնելու համար:


Այս ամենը Ձեզ յայտնում ենք առանձնաբար: Աղօթեցէք գործի յաջողութեան համար: Մաղթում ենք հայ ազգի երջանկութեան, մեր տանջուող զաւակների փրկութեան և Ձեր ամենիդ գործունէութեան յաջողութեան համար:

ՍՏՈՐԱԳՐ. ԳԵՒՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 սեպտեմբերի 1912 թ.,

Ս. Էջմիածին





18 նոյեմբերի 1912 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԱՇՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵԽ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՅ Տ. Տ. ԳԼՈՐԳԱՅ Ե.-Ի


Ազգընտիր Հովապետ,
Թրքական լծի տակ ընկած հայ աշխարհները նորէն արիւնոտում են:
Մեր վերջին յոյս՝ «Օամանեան Սահմանադրութիւնը» կարգ և արդարութիւն չբերեց, բարքարութիւնը զինաթափ չարեց և մեզ ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնից զրկեց այնպէս, որ այլևս չունենք ոչ մի սպասելիք «կիսաղուսնից»:

Աստուծալին նախախնամութիւնը Ռուսիոյ Մեծազօր կայսրների արքայական տիտղոսների փառաւոր շարքի մէջ, իր անհաս կամքը դնելով նաև «Վեհապետ հայ աշխարհների» տիտղոսը, հետն ամբաժան դրել և հաստատել է ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆԻԿՈԼԱՅ Բ.-Ի ՕԳՈՍՏԱՓԱՌ ԱՆՁԻՆ ՄԵՋ «Հայ աշխարհների Վեհապետին»:

Արդ՝ հասել է ժամը, ով Ազգընտիր և կայսերահաստատ Հովվապետ Հայկական տոհմի, փութա, տար և սկոյիր Քրիստոնեաների Առաջական պաշտպան Ռուսիոյ կայսեր և նորա Օգոստափառ անձին մէջ ապրոյ «Հայ աշխարհների Վեհապետի» առաջ մեր անսասան հաւատարիմ հաբառակութեան զգացմոնքների հետ միասին և մեր սրտագին աղաչանքն ու պաղատանքը՝ ուշադրութեան առնելու «Հայ աշխարհները» մրկոյ կրակն ու բոցը, «Հայ աշխարհները» մաշող սուրբ ու թուրք և, պաշտպան հանդիսանալով իր «Հայ աշխարհներին» արդար կարգի և օրէնքի տակ հնազանդեցնելու Քրիստոնեութեան և հայի թշնամի՝ խաւարի ու բռնութեան զաւակներին:

18 նոյեմբերի 1912 թ. Բարում:

Հիմք ՊՊԿԱ, ֆոնդ 57, գ. 5. գ. 677. թ. Թա նարդուրավոր ստորագրություններ:



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵԿՐՈՊԻՑ

Մասնաւոր

Մանշեստր
Հոկտ. 27/9 Նոյ. 1912

ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴ. ՎԱՐԴԱՋԱՐԵԱՆ,
ԴԻՒԱՆԱՊԵՏ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ի Ս. Էջմիածին

Հայրենիքի հայոց ահուելի կացութիւնն արդէն յայտնի էր, իսկ այժմ կարելի է երևակալ, թէ՝ ներկայ պատերազմի մէջ թրքաց չարաշար պարտութեան պատճառաւ որքա՞ն ահաւոր աղէտը կապանան մեր հեգ հայրենակցաց. քանի որ ապացուցեալ ճշմարտութիւն է թէ՝ «արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հօրագոյնս կոուին». մանաւանդ երբ իրենց ճիրաններուն մէջ ունին անզէն անելող ժողովուրդներ՝ որոնց վրայ պիտի թափեն իրենց մթերեալ թոյնը: Խ'նչ որ էլ լինի սակայն, մեր հաւատքն առ Աստուած հաստատուն է, թէ՝ իր արդարութեան և երկայն մտութեան չափն այլևս անցած է և վերջապէս պիտի փայլատակէ իր վրէժիսնդրութիւնն: Թողլով սակայն սոյն խորհրդածութիւններն՝ անցնինք մեր ըսելիքին:

Թէսկու նախ քան զակզբանաւորութիւն պատերազմին պահ մը լսուեցաւ թէ՝ Վեհ. Հայրապետն իր լուրջ ուշադրութեան և հոգածութեան առարկայ ըրած է իր հայրենաքնակ հօսին աղիողորմ վիճակն, սակայն արդիւնքի մասին տեղեկութիւն մը չունեցան Եւրոպաքնակ հայերն, որոնք, մանաւանդ Անգլիաքնակը իրաւամք կը մտածեն, թէ՝ եթէ Թուրքիոյ բաժանումի մատնուելու ներկայ պատեհագոյն աղիթէն ալ չօգտուելու լինի ազգըն, գէթ հայրենիքի մէջ գտնուող բիւրաւոր հայոց ամէն կերպի խաղաղ և ապահով կեանք մը վարելու կատարեալ ապահովութիւնն հաստատապէս չերաշխաւորելով, այլևս կորսուած պէտք է համարիլ ազգն, մանաւանդ

Մայր Հայութեանիքին, և անոր վրայ կարդալ վերջին «Հռգուց» և «Անշարժ եղիցի»-ն:

Տեղուս պատուար լրջախոն ազգայինք ունանք խնդրեցին որ այս պարագային վրայ Վեհ. Հայրապետի խորին ուշադրութիւնն հրամիրեմ մասնաւոր և ո՞չ պաշտօնական թղթով մը, նաև յայտնեմ, թէ՝ եթէ Ն. Ս. Օծութիւնն կը կարծէ կամ կը մտածէ իր հեռաւուս իմաստութեամբ թէ՝ Երոպայի, մասնաւոնդ Անգլիայ մէջ գտնուող հայք կրնան որ և է բան մը ընել, և առ այս եթէ ունի ո՞ր և է հրաման կամ թելադրութիւն, թող բարեհաճի զեկուցանել ըստ այն վարուելու համար:

Ողջունի սիրոյ

մեամք աղօթակից
գէրոգ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԻԹԻՒԾԵԱՆ

Յ. Գ.

Ի գիտութիւն կը հաղորդեամք թէ՝ սեպտ. 17/30-ին քաղաքիս Աթենիումի մէջ ընդ նախագահութեամբ մերով մեծ միջինկ տեղի ունեցաւ հայաբնակ բազում գաւառաց մէջ տիրող բարբարոսութեանց համար: Ըստ որոշման նոյն համախոսմբ ժողովոյ մի հեռագիր ուղղեցի Մեծ Եպարքուսին (պատճեն ալ Հայոց Ս. Պատրիարքին) բողոքելով հայութեանիքի հայոց աղիողորմ վիճակի մասին: Հեռագիրն կը բաղկանար 130 քառէ. եզրակացութեամբ կը պահանջուէր վերջ տալ Սահմանադրութեան ի վեր շարունակեալ Համիդեան սիսթեմաթիք ջարդերու և հաստատել երկրին մէջ հայոց կենաց, պատույ և ընչից ապահովութիւնը:

Մեծ եպարքուսն Արտ. գործոց նախարար Նորատունկեան Էֆենդի և Լօնտօնի Օսմ. դեսպան Թէվֆիք փաշայի միջոցաւ պատասխանած էր, թէ՝ անմիջական ազդու միջոցներ ձեռք առնուած են Հայաստանի մէջ պահութիւն հաստատելու համար, ևն, ևն (Սովորական սուս և կեղծ խոստումներ՝ որովք ցայսօր օրօր կարգացած և խարած էին նոյն իսկ Մեծ պետութիւններն): Յետոյ խիստ ապահով աղբիրէ իմացանք թէ՝ մեր բողոքն բաւական ազդեր է Բ. Դրան վրայ, կերևի շնորհի նոյն օրերու փափուկ կացութեան, և ինչ ինչ Ակատումներով, որոց մին և գիլաւորն մեր թեմի Ամենայն Հայոց Հայրապետութեան ենթարկեալ լինելն է: Եւ սակայն մեր միթինկեն յետոյ շուտ վրայ հասաւ Պալքանեան պատերազմն և այժմ ձայնն թնդանօթիւնն է: Երանի՝ թէ այդ ձայնն հէզ հայոց համար ևս փորկար արդիւնք ունենար:

Զմոռնամ յայտնել, թէ՝ տեղուս Օսմ. հիւպատուս ըստ հրամանգի Լօնտօնի Օսմ. դեսպանին մի քանի պատուար հայերով պաշտօնապէս այցելոց մեզ անձամք յանձնելով պատասխանագիրն:

Գ.Ե. Ի.



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԻՈՑ

Համար 2414
Մասնաւոր

Մանչեսթ
11/24 դեկտեմբեր. 1912

ԳԵՐԱՊԱՏԻՒ ԴԻՒՍՆԱՊԵՏԻ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. ԲԱԳՐԱՏ Շ. ՎԱՐԴ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆԻ

Ի Ս. Էջմիածին

Ժամանակին ստանալով Ձեր նոյեմբ. 8 ամսաթուով և թ. 1450—51 գրութիւններն փոփացի ձեռնարկել ի գործ: Մանչէաթուն երեք պատգամաւոր ընտրեցինք, որոնք Լօնտօն գնացին տեղույն մէրազնէից հետ համախորհուրդ գործելու համար. Լօնտօնցիք միաբանեցան Մանչէաթուցոց և անմիջապէս թէ՝ Մանչէաթուցոց և թէ՝ Լօնտօնցոց կողման մէկ մէկ պատգամաւոր Լօնտօնէն անցած էին ի Փարիզ, որ տեղի ազգայինք ևս միացած էին Անգլիաբնակ ազգավոնց: Նախորդ կիրակէ ժողովականք գումարուած էին յԱռաջնորդարանին Փարիզու և որոշած էին դիմել Վան. Պողոս փաշա Նուապարի, առաջարկելու համար որ ինքն ալ հարկ եղած աշակեցութիւնն չզլանայ, բայց ահա նոյն միջոցին կը ժամանէ Վեհ. Կաթողիկոսի նոյնանպատակ մի կոնդակն առ նոյն Պողոս փաշա, որ ընդունած է իրեն առաջարկեալ գործն:

Փարիզի մէջ ժողովն պատրաստուած լինելով Պետովեանց որկուելիք աղերսագրոց պատճեններն դեռ երկու օր առաջ ստացանք զայնս, ինչպէս և Ձեր նոյեմբ. 26 և թ. 1752 ծածկաբար մակագրեալ պաշտօնագիրն:


Արդէն ես ինքս մտադիր էի Լօնտօն իշնել և գործին մղում տալ կա-

յելի եղած միջոցներով, Վեհափառի հրամանն ալ կրկին կը պարտաւորէ զիս: Գրեցի հարկ եղածն Լօնտօնի Հոգաբարձութեան, որմէ այսօր պատափան ստացայ առ ժամն յետաձգել ուղևորութիւնս, որոյ պատճառն երրոպացոց ծննդեան տօնն է, գրեթէ մինչև յառաջիկայ երկուշաքթի բուլանդակ Ամգրիոյ մեջ գործառնութիւն դադարեալ են. Հաշտութեան խորհրդաժողովն երեկունէ դադրեցոյց հիստերն: Պողոս փաշան ալ Լօնտօն եկած չէ տակաին, հետևաբար յառաջիկայ շաբթու պիտի երթան Լօնտօն: Ծննդեան տօնի օրերէն յետոյ աղերագրերն ալ պիտի պատրաստուին վալերու կերպի գրի մերենական գործիներով, զորս ստորագրելով պիտի դրկեմք իրենց հասցեից:

Առ այժմ հաղորդելով զայսոսիկ ի գիտութիւն Նորին Սրբութեան, Լօնտօն գնալուս ի՞նչ կարևոր լուր որ ունենամք՝ կը փութամք տեղեկագրել:

Մնամք աղօթակից
առաջնորդ հայոց Երրոպիոյ
ԳՀՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ





ԱՐԱՋՆՈՐՈՌԻԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԵԽՐՈՊԻՈՑ
Թ. 2419

Լօւսոն. դեկտ. 20/2 յունուար 1913

ՊԱՏԾԵՆ
Ա. ՊԱՏՐԻԱՐք Կ. ՊՈՂՍՈՅ
ՈՒՂՂԵԱԼ ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՊԱՇՏՈՆԱԳՐՈՎ.

ԱՄԵՆ. ՄՐԲԱՋԱՆ ԵՂԲԱՅՐԻ ՔՐԻՍՏՈՍ

Կ. Պօլու ազգային և երրուպական թերթերէն կը տեղեկանանք, թէ՝ Օմանեան կառավարութիւնն Հայաստանի ինչ ինչ նահանգաց մէջ կուզէ եղեր բարեկարգութիւններ մտցնել. և առ այս Մեծ Եպարգուսի խորհըրդակցութիւն հրահրեր է նախկին Պատրիարք Օրմանեան Սրբազանը և որիշ պատուարժան ազգայիններ, ինչ որ զարմանք պատճառեց շատերու, քանի որ Թուրքիոյ համայն հայոց օրինաւոր Պատրիարքն իր վարչութեան հետ պաշտօնի վրայ կը գտնուի և ազգովին շնորհակալութեան և գոհունակութեան արժանի կերպի կը գործէ: Բ. Դրան այս ընթացքն չգիտեմք թէ մինչև ո՞ր աստիճան անկեղծ մտածման արդիւնք է, որի մասին ավելորդ կը նամարեմք ասկէ աւելին գրել աստանօր՝ քանի որ մեր ներկա նամակն գրելուն քո՞ւն նպատակն տարբեր է:

Ցայտնի է արդէն Ձեր Ամենապատութեան, թէ Բ. Դուռն բազում տարիներէ ի վեր քանի՛ քանի՛ անգամներ մի և նոյն նպատակաւ ձեռնարկեր ըրած և խոստումներ շուշանած է տեսակալարէն, սակայն գործնականապէս՝ ամեն անգամին ալ ամենափոքր քաղ մ'իսկ առած չէ դէպի բարեկարգութիւն, և, միշտ խնդիրն մնացած է միենոյն վիճակին մէջ, որոց նետևանքն եղած են յաճախ նորագոյն հալածանքներ և կոտորածներ, քանի որ բացալյատ ճշմարտութիւն է, թէ առանց եվրոպական պետութեանց հսկողութեանց քանի նշանակութիւն չպիտի ունենայ Օման. կառավարութեան ցոյց տուած դիտարրութիւնն ի բարեկուխութիւն վիճակի Հայաստանի մեր թշուառ ժողովրդեան:

Եւ այս իսկ պատճառու է, որ Պերլինի դաշնագրոյն մէջ 61-րդ յօդ-ուածն գոյութիւն ունեցաւ, իբրև միջազգային կարևոր հարցերէ մին, և հայերն զօրութեամբ այդ 61-րդ յօդուածին՝ իրաւուք ստացած են իրենց կենաց, պատույ և ընչից ապահովութիւնն միշտ, մանաւանդ ի պատեհ առիջու խնդիր ընել թէ՝ Օսմանեան կառավարութեան, և թէ՝ երրովեան միւս պետութեանց: Եւ նոյն 61-րդ յօդուածի կատարեալ գործադրութեան մէջ է հայկական տառապանաց վախճանն և նոր կեանքի մը ծնունդը: Պէտք է ամէն կարելի եղած չանքն ի գործ դնել և թախանձանօք խնդրել նոյն 61-րդ յօդուածն ստորագրող թէ՝ Օսմանեան և թէ՝ երրովական միւս Մէծ պետութիւններէն՝ որպէս զի աշխարհի առջև հանդիսաւորապէս ստանձնած մարդասիրական պարտականութիւննին կատարեն, առաջինն գործադրելով իրեն վերաբերեալ պարտքն, և, միւսներն ալ իրենց հսկողութեան իրաւունքը:


Ասոր հակառակ ուրիշ կերպ վարժունք, կամ, տեսակ մը հաշուէյարդարութիւն՝ ոչ միայն յո՛յժ անհմաստ, և մեզ հայոց համար աննպաստ մի բան պիտի լինի՝ այս գուց նոր դուռներ պիտի բանայ ուրիշ մեծագրոյն և անհանոյ անտեղութեանց:

Ուստի, ամեն, եղբայր, մեր ժողովութեան փափագն այն է, որ Զեր Բարձր Սրբազնութիւնն առանց Պերլինի դաշնագրութեանց 61-րդ յօդուածի մէջ գծուած մեր իրաւունքներէն շեղելու կամ տարբեր ուղղութեան հետևելու՝ ուժով պնդէ և պահանջէ անոր տառացի գործադրութիւնը, ինչպէս որ մենք ասս բոլոր երրովական պետութեանց և դաշիճներուն ուղղեալ մեր աղերսագրովք նո՞յնը խնդրեցինք միայն. նկատելով զայն բոլոր պետութեանց կողմանէ պաշտօնապէս հաստատեալ և ընկալեալ ամեննեն գօրաւոր խարիսխ մը:

Օսմանեան կառավարութիւնն Հայաստանի բարեկարգութեան մասին յինքնենէ ըրած նոր առաջարկովն և խոստումներովն, և, պատրիարքարանիդ ալ հայան գտնուելովն՝ մի՛ գուցէ յառաջիկայ վեհաժողովին (թէպէտ որոշապէս յայտնի չէ թէ տեղի պիտի ունենայ այն) գլւքը մ'ունենայ ի ձեռին, ըստելով, թէ՝ «մենք հայոց հետ համաձայնած եմք...»: Այն պարագային ահուելի պիտի լինի յուսահարութիւնն ազգին և ամէն անոնց՝ որք ամենուրեք յայտնի կամ գաղտնի անձնութիւն կրունեցին ամէ՛ն գոհողութիւն ընելով թէ՝ բարոյապէս և թէ՝ հիթապէս: Աստնք ոչինչ. բայց Հայաստանի վիճակն գուցէ զգալի փոփոխութիւն մ'ալ չպիտի կրէ դեպի լաւն. քանի որ, իրա՛, այսօր շա՞ն բաներ կը գրուին և կը խօսուին՝ սակայն դիանագիտութիւնն... ո՞վ գիտէ թէ վաղուան համար ի՞նչ անակնկալներ կրնայ ծնանիլ...:

Մնամ

Գ. ԵՊՍ. ԻԻԹԻՒԾԵՍՆ



ԴՐՈՒԹԵՆԱԿԱՆ ԶԱՐԴԸ ԽԱՐԲԵՐՈՒԹԻՆ ՄԷջ

Ծրագրուած, այդ՝ տարիներ առաջ ծրագրուած հայաշինչ քաղաքականութիւնը դրութենական կերպով գործադրուեցաւ Խարբերդին մէջ ինչպէս նաև Հայատանի բոլոր հահանգներու մէջ: Մոնկողին յատուկ աներեւակայիլի խժդութիւններով, եղեռներով և նախշիններով խառն. ահաւասիկ եղանակները որք գործածուեցան Խարբերդին մէջ ջնջելու անմեղ հայերը իրենց բոլոր պատագաններով, իմերով անոնցմէ ինչք և պատի, կեանք և երշանկութիւն, կրօնքը և լեզուն...:

Առաջին քայլ տեղի ունեցաւ կրթական հաստատութիւնները քանդելու և փճացնելուն մէջ. գոցերով ազգային բոլոր դպրոցները, ինչպէս նաև ամերիկեանը, Եփրատ գոլէճը թէ դպրոցը և թէ աղջկանցը: Գոլէճները, վարժարանները ամենքն ալ գոցերու հրաման ըրաւ կառավարութիւնը առարկելով «Համաճարակ հիւանդութիւնք կան» փուն և սնուտի փաստաբանութիւն. ցրուել տուար բոլոր աշակերտութիւնը շենքերը վերածելով հիւանդանոցներու և օօրանոցներու: Դպրոցներու փակողիլլ կը տեղի ունեցաւ 1915 Մարտի 28ին. Վարիչ մարմինները, Ամերիկեան Միսիոնարութիւնը կրկնակի դիմումներ ըրին, սակայն արդինքը բոլորովին պարապ. լսող չեղա՛ր...:

Սպրիդին տեղի ունեցան կարգ մը տուներու խուզարկութիւնք ամբաստանուելով իբրև կուսակցականներ, սկսած փնտուել գրութիւնք և այդ առթիւ ձեռքակալել ականաւոր անձննք: Բայց այս առթիւ ծեծ, չարչարանք և լին չկար, եղածը բանտարկութիւնն էր սոսկ. Մայիս 1-ին սկսան ձեռքակալել փրօֆեսորները—Եփրատ գոլէճին—կրթական հաստատութեանց պատկանող անհատներ, հարուստներ. և նշանաւոր գրողներ, վարդապետներ և քահանաներ, որոնք որ նախապէս աշքի զարնուած էին: Մայիս 10-էն սկսաւ ծեծ, չարչարանք նետուեալ կերպերով: Նախ սկսան ծեծել, յետոյ ծեծուողները պայտել, թևեռել, գլուխները Մերէնայից մէջտեղ դընել և ճգմել. վերջին կերպը չարաշար կերպով գործադրուեցաւ Եփրատ գոլէճի փրօֆեսորներու և որիշ նշանաւոր հայ մտարականներու վրայ, չմոռնամ ըսել թէ աքցաններով սկսան նաև ոմանց եղունգները և մատները քակել, ձեռքերուն մէջտեղ քէզապուի լեցնել, վառել և տանջանքները ալսպէս կրկնապատկել:

Տառապանքի այս շրջանին որ ատեն ժողովուրդը ծայր աստիճան

սկսած էր լուսահատիլ աներևակալելորէն, աճգութ կառավարութիւնը Մաքայիշլական խալի մը սկսած «հեռագիր ունենք, չէզոքները պիտի արձակնեք, իսկ կուսակցականները պիտի թեթևորէն պատժենք, ժղովուրդը գրգուելու չե», Վաղին կանչելով հայոց առաջնորդք Պատկ ծ. վարդապետը, գերման ծովէն Միսիոնարը Սր. Էյմանը, հայ աւտարանականց հովիլը Վեր. Վարդան Սմիրնանեանը ասոնց բոլորին կը հաղորդէ իրեն եկած հեռագիրին պարունակովինը պատուիրելով հանդերձ այնքան հրամայական և իշխանական թօնով մը. «Եթէ ժղովուրդը կուգէ որ քանտի մէջ եղող չէզոքները շուտ արձակուած տեսնել, քովերնին եղած որևէ զէնք և ուզմամիտերք շուտով մեզի յանձնելու են, անկէ վերջ հաւանական է որ բոլորն ալ ազատ արձակենք». ակնարկուած «քոյլոր»ը կուսակցականներու ազատման հաւանականութիւնը կը ցուցնէ:

Հոգևոր պետերը գերման միսիոնարին հետ հաւատացած, այս' թուրքին յատուկ փաղաքշական և քաղաքավարական կեղծ յարգանքներուն և խօսքերուն ատնք սկսան կատարեալ եռանդով քարոզել որ «զէնքերը կառավարութեան յանձնելու ենք, եթէ ոչ՝ մերիները քանտ պիտի մնան»: Գերման Միսիոնարը որն որ ժղովուրդի վրայ հայսապէս լաւ ազդեցութիւն մը յողուցած էր, Վարդապետը իրենց եկեղեցիներու մէջ խօսած քարոզներովը կարողացաւ համոզել և համոզել յեղան ժղովուրդը թէ՝ «կիրկութիւնը մէր քանտարեալ եղարց՝ զէնքերը յանձնելուն մէջ կը կայանայ». առանձին առանձին ժղովուներով, այսպէս համոզելու ժուպերով ժղովուրդին մէջ այն հաւատքը ստեղծեցին թէ՝ յուրեմութիւնը գէնքերը յանձնելուն է»: Բողոքականց երեցն ալ նոյն հաւատք ունենալով գիտելով միսիոներու արարքներուն և կառավարութեան խոսումներուն, վստահած սա ալ սկսաւ քարոզել...:

Այս պարագային խորամանկ կառավարութիւնը յաջողեցաւ թշնամութիւն և դժգոհանք սերմանել ժղովուրդեան մէջ կուսակցականները ոչ կուսակցականները և փոխադարձարար սկսան զիրար խճքել, մեղադրել, որու յաջորդեց կարգ մը անախորժ դէպքեր....: Քարոզներու արդինքը եղաւ զէնքերու յանձնումը, մերիներու յիմարաքար խարուիլ, յեղան, միամիտ առաջնորդը այնքան համոզուած թուրք պաշտօնէից խօսքերուն որը կակս գիտեր մարդ դրկել, նամակներ գրել որ ունեցածնին անյապաղ և առանց այլեալի յանձնեն. միամիտ ժղովուրդը իսկոյն կը համակերպի: (Ստորագրեալս պաշտօնիս քերումով Կարմիր գիտը կը գտնուէի, երբ Պըսակ վարդապետ ինձի ուղած էր միևնույն իմաստով նամակ մը, որուն հակառակը պատասխանեցի և քիչ մնաց որ... ես արդէն այդ օրէն փախըստական մը եղաւ և որ լինելու ոչ ոք գիտեր մէկէ մը ի զատ, որը ուտելիք կը հասցնէր ինձի): Այս թոլոր գործողութիւնները, լաւ ասած հայերը տեղի ունեցան Մայիսի վերջերը և մինչև Յունիսի 10րդ օրը, որ ատեն արարուածը կը փոխաի:

Զէնքերու յանձնելուն անմիջապէս յաջորդեց բանտի մէջ եղողներու աքսորումը, որոց թիւը 1500—1600 կը լինէր և քաղաքի և շրջակայից սուկալիորէն պաշարումը. Խարքերդէն—Մէզորէ կէս ժամ կամ երեք քառորդ հեռաւորութեամբ տեղը երթևեկութիւն դադրեցաւ դուրսերը տեսնուող ունէ այր մարդ անխնայ կը ձերքակալեն և կը ծեծեն, գլուխները, պեխները և կրոնականաց մօրուքները կը փետեն ու....: Խժղժութիւնները անհկարագրելի են այլևս, տունէ տուն մինչ իսկ երթևեկութիւն անկարելի է, կը լսենք որ քանտարեալները գիշերները կը քշեն... (թուրքը որչափ հաւատարիմ է իր խոստումներուն), Պատկ վարդապետը դիմում կը կատարէ և վերա-

դարձին վերջնականապէս կը ձերբակալուի, տասնամինգ անօթի ծարաւ բանտը անցնելէն վերջ 900 (ին հարիր) ինտէլիգէնտներու հետ կաքսորուի արդէն ուժապատ եղած: Մարդիկ յականէ յանուանէ կոկոչին փնտրուիլ բայ կառավարական տոմարին: Տեսէք որքա՞ն խորամանկութիւն:

Երբ այրերու ձերբակալումները խստոթեամբ կը շարունակուէին, շըրջակայ գիտերու բնակիշները բոլորովին շարդուած էին, կանանց դիմումները գերման գթուո՞ւ? Միսիոնարին մօս՝ «Մեր էրիկներու արինթաթախս հագուստները դիտմամբ մեր դուռները կը բերեն ձգեն» խօսքերը Միսիոնար Մր. Էլմանին գութը չի շարժեր. «Չեմ հաւատար Զեր խօսքերուն, կառավարութիւնը մեզի վստահացուցած է թէ աքսոր պիտի ըլլայ, բայց ոչ ջարդ»... յիմարի տրամարանութիւն, խարուելու քանիներոդ անգամն է արդեօք: Յունիսի 15էն սկսած ընդհանուր ժողովրդեան աքսորումը, բանտին կարգ մը անհատներ արձակուեցան մեծ կաշառքներով որ իրենց ընտանեաց հետը մեկնին, թայէ թաղ սկսան պարագել, հանել Տիարավերի և Մալաթիոյ գծով երկու ճամբու վրան լեռներ և գետեր, որավազի կուլ տան...: Այլևս թող Ամերիկեան բռնօվը Մր. Տեղինը, Ամերիկեան Միսիոնարութիւնը, եթէ խիդի ունին գերման միսիոնարք և միսիոնարութիւնը թող վկայեն իրենց աշքերով տեսածները, փափչողներու դէմ յանդիման իրենց ըրած պատմութիւնները, իրենք իրենց աշքերով տեսածները թող պատմեն աշխարհին ճշմարտութիւնը ցուցներու թէ կարաւան կարաւան, խումբ խումբ հանուող անմեղ բնակչութիւնը ինչպէս ժամ ու կէս հեռաւորութեամբ Կէօլծիք ծովակին եղերքը, լեռներու մեջտեղերը, ինչպէ՞ս կը շարդէին, կը կողոպտէին, Մալաթիոյ ճամբու իջովի ջուր սառած տեղին մէջ, Եփրատ գետին մէջ ինչպէս դիակները լեցուած են, ինչպէս մաքուր ջուրը արեան փոխուած էր տառապանքի առ շրջանին մէջ, ինչպէ՞ս հայուն գոլքերը կը խեն բիւղերը և ինչ եղանակներով կը փափցուին հայ կոյսերը, հոս կը թողում կարող գրիշներու որ իրենք պակաս լրացնեն:

Ծամբոյդութեան մէջ ականատեսներ ինձի պատմած են՝ որք այժմ կապրին Տէրսիմի շնորհի ազատուելով թէ ինչպէս շարասիրտ ժանդար մանները և աքսորուածներ առաջնորդող զապետները ամէն օր նոր նոր խարկանքներով կը համոզեն ժողովուրդը «հեռագիր եկած է, այլևս մնացողը պահառվ Ուժքա պիտի հասցնենք»ի այս համոզիչ խօսքերու տեղէ տեղ կը փոխադրեն միշտ օրէ օր պակսեցնելով... և ինչպէ՞ս էրիկներու առջև կինները կը բռնաբարեն, հայրերուն առջև աղջիկները կուզեն...: Լսեցք, մայրեր իրենց ձեռքերով կը կտրեն իրենց գեղանց աղջկանց մազեր երեսնին գշկոստ, աղտ քելով տգեղցնելու համար հայ կինները և հայ աղջիկները յօժարաբար ինքզինքնին գետերը կը ձգեն, ոմանք ալ բռնի կնութեան կառնուին և Խարբերդի և Մալաթիոյ մէջ 5000—6000 հայ աղջիկներ կա գեղեցիկ տեսակեն, որոնք ակամայից կիններ են թուրք զապետներու, խօճաններու և ժանդարներու Տիարավերի և Խարբերդի շրջանակի մէջ 3000էն աւելի ալ՝ 10—12 տարեկան մանչեր կան քիւրերու և թուրքերու տունները որ ճամբաններ տեսած գթացած և քովերնին առած են ու այժմ Մայրենի լեզունին խօսելը մուցած են: Աքսորանքը յուղարկաւորութեան փոխուած էր, առաջի օրէն Միսիոնարք և խելացիներ կուայնցին զայս սակայն ազատիլը և փափչի անկարելի էր, չորս կողմը պահնորդներ կային...: Քաղաքին մէջ համրուելիք աղջիկներ մնացին այն ալ թրքանալով և ամուսնանալով համակերպելով և ամէն մասամբ տուժելով...: Օգոստոսին սկսան շրջակայ գիտերու եկեղեցիները և գերեզմանատունները

բակել, այսօր միայն Խարբերդի մէջ Ամերիկեան Միսիոնարութեան աշքին տղջ չւանդուած կը կենան Սր. Գևորգ Եկեղեցին և հայ. Աւետ. Եկեղեցին ու Մեզորի մէջ ֆրայէ գերման Միսիոնարաց ի պատի երկու Եկեղեցիներ աստճա բոլորն ալ հիւանդանցները լրած են արդեօք իրենց պէտք գալու համար չեն բանդած, թէ օտարեները կը խարեն...: Տասնեւովը ամիս Խարբերդի և Շիջակսկը անցուցի պահուած կենաք մը. եօթը ամիս Ամերիկեան հիւանդանցի մէջ իբրև հիւանդապահ. Նոյեմբերի 18րդ օրը Ռուսելցիի Մէհմէտ Ալիի, մելազեմի Եվլի և Սրբանցի Մէհմէտ Ռիզայի հետ ունեցած խօսակցութեան մը առթի «Պիշարէ Արսէն, Ձեր ազգին բնաշնչումը պիտի ըլլար պողկարական պատերազմին ատենք, սակայն չ'յաջողեցանք, յետոյ Սահմանադրութեան շատ քիչ մնաց որ յաջողէինք, բայց Անգլիայէն և Ռուսիայէն ու Ֆրանսայէն վախցանք, իսկ այժմ որ այս երեքն ալ մեր թշնամիներն են ու գերման հզօր պետութիւն ալ մեր կողմն է և ինք մեզի ազատութիւն տուալ մեր ներքին գործերը անկախօրէն վարելու, ալ ինչ կարգիլէր մեզ Ձեզ նման վաս ըմբուս ազգ մը փճացնելու. Նուպար փաշ շան պէկիկ կուզէր, թող գայ որ առնէ և տեսնէ... Արսէն, եթէ դուք խելացի ազգ ինձէիք երբ Քարիթիլասօնները ջնջուեցան, Ձեր ջնջումն ալ հասկընալու էիք»...: Նայեցէք որչափ առաջներ ծրագրուած եր դրութենական այս ջարդը:


ԽԱՐԲԵՐԴԻ ԵՓՐԱԾ ԳՈԼԵԺԻ ԵՒ Ա.ԱՏՈՒՍԾԱԲԱՆԱԿԱՆ
ՃԵՄՍ.ՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՑԵՐԻՆ
ԱՐՄԵՆ ԽԱՀԻԿԵԱՆ

Կարին

1916 Նոյեմ. 28

Գ—125 թ. 18—14





ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե

Վեհափառ Տէր,

Պատի ունեմ յարգանօք զեկուցանել Ձեր Վեհափառութեան, որ ես եկել եմ Թիֆլիսից մի յատուկ միսահայով և յանձնարարութեամբ առ Ձերդ Վեհափառութիւնը, Հայ ժողովրդական կուսակցութեան Կենտրոնական կոմիտեի, Բայ առևտրական և ֆինանսական դասակարգերի ներկայացուցիչների կողմից:

Խմ միսահան վերաբերում է այն խնդրին, թէ ինչ ենք և միջոց գտնել փրկելու համար թիրքաց Հայաստանի և Անդրկովկասի հայ ժողովուրդը այն վերահս վտանգից, կոտորածների և շարդերի վտանգից, որ առաջ է եկել վերջին աղետավի դեպքերի, մանաւանդ Էրզրումի գրաման հետևանքով: Ընդհանուր համոզմունք է, որ թիրքական զօրքերը կարող են խուժել Անդրկովկասի սահմաններից ներս, գրաւել մեր երկիրը, քանի որ մեր կողմից չէ կարող լինել զօրել դիմադրութիւն այն պատճառով, որ ոռուսկան զօրք չը կայ. մեր ազգային զօրամասերը դեռ լաւ և բաւականաչափ մեծ քուկ չեն կազմակերպուած և երբ թիրքերը գրաւեն մեր երկիրը, անկասկած, կը կազմակերպեն շարդեր: Եւ նոյն իսկ այն դեպքում, եթէ Անդրկովկասը չը գրաւէ, թիրքերի ձեռքով, և Կնքիւ հաշտութիւն 1914 թ. սահմանների շրջանում, ինչպէս ծրագրուած է, թիրք կառավարութիւնը անկասկած, շարդեր կը լայ Հայաստանի մնացորդ հայ ժողովուրդը:

Սպասել որևէ օգնութեան դրսից, օրինակ, անգլիացիներից, տեղիք չունենք, որովհետև այդ օգնութիւնը եթէ նոյն իսկ լինի շատ ուշ, կարող է հասնել, երբ արդէն ամէն ինչ վերջացած կը լինի: Երկրի Օերսում մեր հարևան վլուացիներից նոյնական որևէ օգնութիւն սպասել չենք կարող, նախ, որովհետև նրանք ոչ մի բեալ ոչ չունեն, երկրորդ, որովհետև նրանց երկրին ևս վտանգ է սպասնում: Գալով մեր երկրի թիրքերին կամ թաթարներին, նրանց վերաբերունքը և դիրքը կարու չէ որևէ բացատրութեան:

Արդ, իերի այդ կատաստրօֆային վիճակին մէջ, պէտք է գտնել մի ոյժ, հեղինակութիւն, որ կարողանայ զսպել թիրքերին, ազդել նրանց վրա, որ նրանք կոտորածներ չը սարքեն և շարդեր չը կազմակերպեն: Այդ ոյժը, այդ հեղինակութիւնը Թիրքիայի համար կարող է լինել թիրքերի համար միայն և եթ Գերմանիան, գերմանական կայսրը:

Եւ մեր կարծիքն է, որ մեր ազգի ներկայ անելանելի կացութեան մէջ, բնաշնչումից փրկելու միակ միջոցը—Գերմանիայի և գերմանական կայսրի միջնորդութեան դիմելն է, իբրև վերջին միջոց, որովհետև թէն Գերմանիան Թիրքիայի դաշնակիցն է, բայց նա քրիստոնեալ և քաղաքակիրթ պետու-

թիւն է և մենք հայերս խկապէս Գերմանիայի դէմ ոչինչ չունենք և եթէ պատերազմել ենք նրա դէմ, պատերազմել ենք իրեւ նպատակներ Ռուսաստանի և ոչ յատկապէս իրեւ նայ ազգ: Եթէ Անդրկովկասին վիճակված է ընկնել վայրագ և բարբարոս թիրքերի տիրապետութեան ներքոյ, եթէ Հայաստանը դատապարտված է նորից մնալ թիրքական անագորոյն ծիտակ, հարիւրապատիկ աւելի լայ է որ նրանք ընկնեն Գերմանիայի տիրապետութեան կամ սրուռեկորդատի ներքոյ:

Սակայն ո՞վ իրաւոնք ունի և ձեռնիասութիւն ներկայումս յանուն ամբողջ հայ ազգի դիմել Գերմանիայի միջնորդութեան, որպէսզի նրա ձայնը և դիմումը լսեի լինի: Մենք գտնում ենք որ այդ իրաւասութիւնը և ձեռնիասութիւնը պատկանում է միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին իրեւ Հովուապետի որ ունի ամենայն իրաւոնքը իր վտանգեալ հօտի փրկութեան համար յարուցանել ամէն տեսակ միջնորդութիւնների պետութիւնների առաջ: Եթ վերջապէս Գերմանիան արդեն պաշտօնապէս ճանաչել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգային ներկայացուցչութեան իրաւոնքը այն օրից, երբ նա ընդունել է Պողոս Նուպար փաշայի պաշտօնական պատուիրակութեան հանգամանքը: Դժուար թէ գերմանական կառաւարութիւնը ընդունէ ուրիշ որևէ մարմնի դիմումը իրեւ հայ ժողովրդի ներկայացուցչի, բանի որ հայ ազգը ներկայումս, բացի Եջմիածնի ընդհանրական և ազգընտիր Հայրապետութիւնից չունի մի որևէ այլ ներկայացուցիչ պաշտօնապէս ճանաչված ամենքից:

Այս մկանումներով, ես ունեմ յանձնարարութիւն դիմել Ձեր Վեհափառութեան, որ Ձեր Հայրապետութեան առաջին օրերից իսկ ստանձնել եք Հայկական Մեծ Դատի պաշտպանութիւնը և ղեկավարութիւնը և հրաիրել Ձեր բարձր ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ ամէն րոպէ կարող է ծագել անհրաժեշտութիւնը ուղարկել մի պատգամաւրութիւն գերմանական ձեռնիաս իշխանութիւնների մօս և նրանց միջոցով խնդրել գերմանական կայսրի միջնորդութիւնը՝ ազդելու Թիրքիայի վրայ և թոյլ չը տալու հայերի կոտորած և նոյն իսկ, եթէ հարկը պահանջէ, խնդրել Գերմանիայի հովանաւորութիւնը Հայաստանի վրայ: Մեր կարծիքով, պատգամաւրութիւնը պէտք է բաղկացած լինի երկու կամ մի գերմանագէտ և ուսեալ եպիսկոպոսից և մի աշխարհականից, որոնց ընտրութիւնը, անշուշտ, կախված է Ձեր Վեհափառութիւնից: Մեր կարծիքով, աշխարհական պատգամաւրը կարող է լինել պ. Մ. Պատաւանեանը: Պատգամաւրութիւնը պէտք է Թիֆլիսում ամէն րոպէ պատրաստ լինի, որպէսզի պահանջեալ րոպէին, մեկնել իր միասին կատարելու: Ձեր Վեհափառութեան կողմից նշանակված եպիսկոպոսը, գնալով Թիֆլիս ինձ հետ, կունենայ անհրաժեշտ խորհրդակցութիւն ում հետ հարկաւոր է և վերջնական արդինքը կը գեկուցանէ: Ձեր Վեհափառութեան:

Խորին յարգանքով և ակնածութեամբ


Հ. Ա. Ռ. Ե. Լ. Ե. Ա. Ն.

(Փոխ նախագահ Կենտրոնական կոմիտէտի հայ ժողովրդական կուսակցութեան և խմբագիր «Մշակ» թերթի)

Եջմիածին

23 Մարտ. 1918 թ.

Փ. 57, գ. 5, գ. 176, թ. 1, 3



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՎՍԵՄԱՓԱՅԼՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՆՈՒԲԱՐ ԼԻԱԶՈՐԻ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՎԿԻՐՍԿՈՒԹՅԱՆ

Զերդ Վանմափայլություն,

Կովկասյան Հայատանի Հանրապետական կառավարության նախագահությամբ Պ. Ավետիս ԱՀԱՐՈՒՅՆՅԱՆԻ մի պատվիրակություն է ուղարկվում համայն պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների առջև, ինչպես և առաջին միջազգային կոնֆերանսում Զերդ Վանմափայլության հետ միասին և Միախորհուրդի հայ ժողովունիքի դատը իր ամբողջական ըմբռոնումով պաշտպանելու և նրա արմատական լուծումը վաստակելով՝ համաձայն հիշյալ պետությունների հայութարած ազգերի ազատագրության բարձր ու արդար մկրունքների: Իրազեկ առնելով Զերդ Վանմափայլության որ Կովկասյան Հայատանի այս պատվիրակությունը մեր Հայրապետական հաճությունն ունի, ուրախ ենք, որ այս պատվիրակության, ըստ Էականին համապատասխան է Զերդ Վանմափայլության արտահայտած ցանկության ևս: Եվ քանի որ համաձայն հայ ժողովունիք գերագույն նպատակը մեկ է և անբաժան, մենք լիահույս ենք, որ թէ Զերդ Վանմափայլությունը և թէ մեծ Պ. Ա. Ահարոնյան ու պատվիրակության մյուս անդամները համերաշխ ու համախոն գործունեության, ընդհանուր և անհայտ հիմունքներով — հայ ազգի արդարագույն դատը հզրուածես կապաշտպանվի և նրա իրավական ու քաղաքական լուծումով երջանեկության նոր դարագլուխ կրացվի ազատագրյալ հայ հայրենիքի և իմ սիրեցյալ զավակների համար: Ի նկատի առնելով, որ երկար ժամանակից ի վեր ոչ մի տեղեկություն չունենք Զերդ Վանմափայլությունից և մենք ևս անկարող գտնվեցնք, քաղաքական պարագաների շնորհիվ, հաղորդակից առնել մեր կացության և դրության հանձնարարած ենք Պ. Ա. Ահարոնյանին բանիվ բերանով լրացնել այդ պակասը:

Հայրապետական մեր լիազոր և սիրազեղ օրինությունը առաքելով առ Զերդ Վանմափայլությունը, Գերմանիա կողարկենք առ Տերն ամենայն բարյաց առաջնորդել զիոնի Զեր խոհակունի, որպես և պատգամավորաց,

ի բարին հանրակուն: Օրհնելով զՁեզ կամք մշտական սիրով առ հոգևոր որդիոյ մեր սիրեցյալ՝

(ստորագ. ԳԵՎՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ)

21 Նոյեմբ. 4 դեկտ. 1918 թ.

ՀԽՍՀ ԳԱՊԿԱՆ ՀԼՄԲ՝ ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 94



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ,
ԿՈՍՏԱՆԴՈՒՊՈԼԻՍ
№ 149

14 ՅՈՒՆԻՍ 1919

ՎԵՀԱՓԱՌ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ

Որդիական բերկրութեամբ ընկալեալ և լնթեցեալ զպատճէն սրբատառ կոնդակին, գտուեալն ի 1/14 փետրվարի 1919 ամի, գոհացաք զՏէառնէ վասն բաջառողջ կենաց Մեծի Հայրապետիդ և պայծառ շինութեան Առաքեական Մայր Աթոռոյն Հայատանեաց Ս. Եկեղեցոյ:

Ապաքէն, ամենայն անցք բազմահնար տաճանացն որք անցին ի վերայ սիրեցեալ ազգին մերոյ, մատնեցին զնա ի հոր և ի սոր և ի բուս անհնարին փորձութեանց: Գիտակ եմք և մեք զի փափոկ յոյզք զգացմանց հայրական սրտին Զերոյ բազում անգամ ընկղմեցին զՀայրդ Հոգևոր ի կոծ սգոյ և յարտասուս դառնութեան ընդ անօրինակ կործանումն ժողովրդեան մերոյ:

Այլ սակայն քաղցր է մեզ լինել խրախակից ընդ Վեհափառութեամ Զեր, զի բարեբաստ իրադարձութիւնք աշխարհաներ պատերազմին յոյս մեծ և գերահրաշ ծագեցին յաշս տառապեալ և նուազեալ ազգին մերոյ, և ակն ու միմք ի մոտոյ ի բաց ընկենով զլուծ անըմբերեկի գերութեան անզգամ և այլակրօն ազին, որոյ վասն գոգցես Եկեղեց հասեալ կայ ի կատարումն բանն մարգարեական թէ՝ «Սատուած նախ յիմարեցուցանէ և ապա կորուսանէ»:

Մանրամասնեավ տեղեկագրութիւնք մեր զոցին Եղելոց իրացն, լրնթացն բառամեայ պատերազմին, այն է՝ զտարագրութենէ, զկոտորածիցն, զահագնալուր եղեռանէ, որ ի բարբարոս թրքաց, զբազմաչարչար նահատակութիւնն հոգևորական դասուն, և Հոլովացն Հօտին և Եկեղեցոյն, զամենայն ցաւագին իրագործութիւնքս ալյուրիկ կարգաւորութեամբ և հաւատեաւ, վաղոց ի գիր առեալ և առաքեալ է մեր սու Վեհ. Հայրապետ Հայոց. ուստի ոչ կամիմք միւսանգամ երկրորդել զնոսա:

Բաց աստի, Ս. Օծութիւն Զեր յատուկ իմն նոգածութիւն ցուցեալ ի վերայ առաքեական և պատրիարքական Աթոռոյն Ս. Երուսաղէմի, կամի սոտոյ ինչ գիտել զայժմու կացութենէն նորա, թէ որո՞ց ի ձեռու կայ վարչականին իշխանութիւն: Յաղագս պատերազմական գործողութեանց խափանեալ գոլով

ամենայն երթևեկք և թղթակցութիւնը մեր ևս ոչինչ ստուգութեամբ գիտեմք զորախութենէ վարչական կազմութեան Ս. Ուստին Երուսաղէմ, միայն ի լոյց և ի պատահական ուղևորաց քաղեավ տեղեկութիւն կցկուուր, գիտեմք զի վաճքն հայոց գտանի ընդ հովանառութեամբ անգրիական մեծախառ պետութեան, որ մասնաւոր ինն խնամառարութեամբ հոգայ զպէտու և զկարիս Միաբանութեան և ովատին: Յորժամ հնար լիցի ընդ հուպ ընդունիլ տեղեկութիւն կարևոր զերուսաղէմ, անտարակոյս փողքալոց եմք առաջի առնել զնոսա Վեհ. Հայրապետիդ ի գիտութիւն: Խոկ վասն շփոթութեանց պատերազմին և քաղաքական յեղյաղմանց, զխնդիր եպիսկոպոսական ձեռնադրութեան թողուք ի պատշաճ ժամանակի, բայտ բարեհաճ կամաց Ս. Օնութեան Ձերոյ:


Խնդրեալով զհայրական օրինութիւնն Մեծի Հայրապետիդ ի վերայ ազգին Հայոց առ ի լրումն ըղձից և ի միսիթարութիւն բազմամետայ տառապահաց մերոց:

Մատչիմք ի համբոյ Օծեալ Աջոյ Վեհի Տեսանդ
և մնամք խ. որդի Ձեր

**ՊԱՏՌԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԶԱՒԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

Յ. Գ. Ի վերջին պահու ընկալեալ տեղեկագիր մի ի Ս. Երուսաղէմէ, արժան դատեցաք առաքել զպատճենն Վեհ. Հայրապետիդ:

Ֆ. 57, գ. 5, գ. 205, թ. 1—2





**ԳԼՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՆ ՊԱՏՐԻԱՐք
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾՎԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ
ԷՉՄԻԱԾՆԻ**

Մեր քաջարի գիմուրովեան, գերապատի առաջնորդներին, վարդապետներին և համայն քահանայից դասին, քանիմաց մտաւրականներին, քաղաքացիներին, ժրաշան բանորդներին, գիլականներին և արհեստատորներին և առհասարակ Հայաստանի համբավետովեան քաղաքացիներին ամեն սեփ և հասակի, մեծերին և փոքրերին Մայր Աթոռիս հարազատներին, հայապետական ողջոյն և օրինութիւն:

Աշխարհասասան պատերազմի ընթացքում մեծամեծ զոհեր տիր դու, նայ ժողովուրդ. հարիւր հազարները քեզնից բնաւեր եղան և հարիւր հազարաւրներ, ժողովուրդ և հոգևորականութիւն, իրենց անմեղ արեամբ ներկեցին հայրենին երկրի քար ու հողը: Լաւագոյն զաւակներդ տարագրւեցան և սրախողխող եղան և Հայրենիքի ազատութեան տեսչը վերջին շնչի հետ քեզ աւանդեցին. Առքա գերեզմանի իսկ չարժանացան, քանի որ քո գեղեցիկ հայրենիքը ինքնին մի մեծ գերեզմանոց է, ուր դեռ սաւառնում է հայրենին երկնակամարում համատականների անմահ հոգիները:

Նոքա սպասում են Ձեզ, սպասում են, որ գնաք և հանգիստ տաք նոցա ուկորներին, որպէս զի նոցա տանջած հոգիները խաղաղութիւն գտնեն յախտենամկանութեան գրկում:

Մեր բիւրաւոր համատակները մեռան հրի և սրի տակ, բայց բոլորն էլ շնչերն աւանդեցին մի գաղափարի յուսով տոգորուած—հայրենիքի ազատութեան գաղափարի: Զկար նոցա մեջ ոչ հրեալ և ոչ հեթանոս, բոլորը

մեկ էին, մի նոգի և մի շունչ, մի գաղափարի շուրջը միացած և ի կենդա-
նութեան և բարբարոս սրի հարտածների տակ շունչերը փշելիս:

Մենք որ ապրել և ապրում ենք հայրենիքի միութեան և ազատու-
թեան յոյսով, այօր, հայ կեանքի վերածնութեան գարնան արշալոյսի
առկայծնան օրերին վշտով տեսնում ենք, թէ ինչպէս մոռացել ենք մի ընդ-
հանուր լեզուն և նպատակը, հայ կեանքի շարժող ամիսի տակ, տեսնում
ենք, թէ ինչպէս անյատ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարιած
մարդիկ փոսեր են փորում: Միացեալ և անկախ հայրենիքին ծանր
վտանգներ սպառնացող ներկայ օրերում փոխանակ մի ընդհանուր գործի
շուրջը համախմբւելու, մարդիկ անհատական և խմբական ջլատիչ գործո-
ղութիւնների են դիմում, հայրենին նայը անխարդախ նաւահանգիստ հաս-
ցընելու ծանր աշխատանքների այս դառն օրերում:

Հայ ժողովուրդ, հայ մտարդական, հայ մշակ և գիտացի, հայ արհես-
տաւոր և բաղաքացի գգաստացիր միութիւնն ու համագործակցութիւնը քեզ
ճամբար ընտրիր, համախմբիր օրինասահման քո կառավարութեան՝ Հա-
յատանի հանրապետութեան կառավարութեան շուրջը: Զգաստ եղիր քո
գիտակցութեամբ և քո քայլերիդ հաստատութեան մեջ, չափաւոր եղիր քո
պահանջների հանդէպ, և կառավարութեան նետ քո միութեամբի ձգտիր
հասնել այն օրին, երբ դու քո ջանքերով տէր կդառնան քո հայրենի հո-
լին և ջրին, քո ամրողական հայրենիքին: Ոչ թէ միայն յուսով ապրիր,
այլ և աշխատանքով հասիր այդ օրին՝ քո ձեռքով քո բախտն ու վիճակը
տևօրինելու օրին:

Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա,
որոնք չտեսնողն են ձեւանում, որ մեր տան մեջ մեր դեմ դաւեր են լարում
պայտեցնելու անկախ Հայատանի գաղափարը, նոքա, որոնք չեն տես-
նում հայացինց ծրագիրների քայլ առ քայլ և հետևողական իրագործու-
մը, զգո՞ւմ են, թէ ի՞նչ պատասխանատութիւն է ճանրանում նոցա հան-
դէպ պատմութեան առաջ: Այս րոպէիս, երբ ամենքին պարտականութիւնն
է համախմբել ոչ միայն հայրենիքի պահպանութեան և վերաշինութեան
գործի շուրջը, այլ համանաւանդ հայ ժողովորդի ֆիզիքական գոյութիւնը
պահպանելու դժուարին աշխատանքի շուրջը, ցաւալի է տեսնել, ներքին
երկպառակութիւններ:

Մենք, ինչպէս և մեր երջանկայիշատակ նախնիքները, որ աշխա-
տանք ենք թափել տաճկահայ դատի համար, լայ օրերի յոյսի ակնկալու-
թեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպէներին, և երբ վտանգ-
ած ենք տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց նամանաւանդ հայ
սզգի ֆիզիքական գոյութեան ճգնաժամային գործը, իբր ընդհանրական
Հայրապետ մեր սրբազն պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օր-
հասական րոպէներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստու-
թեան կոչ անել—Հայ ժողովորդ, համախմբիր քո հայրենի հանրապետու-
թեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան
միակ ճանապարհը:

Մենք հաւատում ենք հայ ժողովորդի իմաստութեանը և առողջ բնագ-
դին. Մենք հաւատում ենք, որ հայրենիքի միութեան, ազատութեան և շի-
նութեան ճամբի վրա առաջ եկած արգելքներն ու դժուարութիւնները կվե-
րանան, բոքոքած մտերքը կիսաղաղուն և ամենքը մի խօսք և մի նոգի
կդառնան ընդհանուր գործի ճամբին: Վտանգը և խիստ ծանր վտանգը

Ճեր դունն է, իայ ժողովորդ, զգոյշ եղիր և պատմովեան առաջ ծանր
պատասխանատութեան բեռի տակ մի ընկնիր: Ամէն:


ԳԵՂՐԳ. Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

- Խ 14 մայիսի 1920 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՅԱԹ.
Խ Հայրապետութեան Մերոյ Թ. ամի
ՀԱՅՐԱՐԱՊԵՏԵԱՆ Մայր Ալեքս Ա. Էջմիածնի
ի Վաղարշապատ

Թ. 276





ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՐՈՆ ՀԱՄԱԶԱՍՊ ՕՀԱՆՁԱՆՅԱՆԻՆ

Ի սրտե փափագող իմ սիրեցյալ ազգիս հերշանկության և իմ պանձակի հայրենիքի և Պետության բարգավաճման և հարաբերության, ես շարունակ աղոթում էի, որ Աստված ինձ արժանացներ տեսնել իմ հայրենիքի ազատությունը, անկախությունը և միությունը: Այժմ դաշնագրի ստորագրությամբ մեծ Հայաստանի լրացման ակտը կատարված համարելով ինքս անցյալ օգոստոսի 29-ին Ս. Աստվածածնի վերափոխման օրը, հայոց Մայր աթոռի հնադարյան Ս. Էջմիածնի տաճարում, անձամբ մատուցի Ս. պատարագ, օրինեցի և սրբագործեցի անկախ, միացյալ և մեծ Հայաստանի տոնը, որից հետո Էջմիածնի միարանության և բազմախուռն հասարակության ներկայության Մայր Տաճարի գավթում կատարեցի մալթանք մեր հայուննիքի բարգավաճման և Հանրապետության հարատևության համար:

Ծվ որպեսզի լիակատար կատարած լինի Հայոց Հայրապետը յուր պարտքը դեպի հայրենիք ես սրանով Մայր աթոռ Ս. Էջմիածնի կողմից տալիս եմ Հայաստանի փոխառության ֆոնդին մեկ միլիոն (1000000) ռուբլի, խնդրելով Զերդ գերազանցության ուղարկել Զեր կողմից վստահելի մեկին այստեղ, հիշյալ գումարը Զեզ հասցնելու:

Աղօթարար՝

ԳԵՎՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յ-ը սեպտեմբերի 1920 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆ

№ 486

ՀԽՍՀ ԿՊԿԱ Հիմք՝ ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 34, թ. 13



**ԳԵՂՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՄԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՈՁՆ ԱՍՏՈԽՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՊԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐՈՎԱՐՔ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ
ԷՉՄԻԱՅՆԻ**

Հայրենիքի հարազատ գաւակներին, մեր քաջարի զինորականներին,
քաղաքացիներին, և դիղացիներին, Միացեալ, Ազատ և մեծ Հայաստանի
համայն ժառանգներին նույրում ենք մեր Հայրապետական ողջոյն և օրի-
նութիւն:

ՍԻՐԵԼԻՔ.

Հայրենիքի պայծառ հորիզոնը նորից մթնեց, խաղաղ կեանքը նորից
խանգարուեց. հայ արիւնաքամ ժողովորդը սահմանների վրայ տեղահան
բաց երկնիք տակն է մնացեր. մեր սահմանների վերայ նորից գոռում են
թշնամօթներն, դարձեալ երկու տարի առաջայ մղձաւանջը տիրեր է ամե-
նուրեք և ամենքի բերնից լաւում է «գալիս է թշնամին»: Այս, Հայոց ժողո-
վորդ, գալիս է թշնամին, անգոյթ թշնամին, ևա արդէն մեր դռան, մեր
դէմ կանգնած է և իր վերջին ուժերը հաւաքած լուսահատ կոհի է մղում և
ոգում է մեզ բոլորովին տանից տեղից, հայրենիքից և ազատութիւնից
զրկել և հսկայելի նման մեր ուկորներ անապատի մէջ ցիր ու ցան անել:
Ինչ ես մտածում դու անել, կուել քաջաքար և մեռնել հերոսաքար, թէ յա-
փառենական ստրուկ դառնալ, կամ պարանոցդ թշնամու սրի առաջ պարզել
և ոչնչանալ: Հեռո՞ւ հեռո՞ւ քեզանից, այդ ինքնակործան միտքը: Եթէ քնզ
համար թանգ է հայրենիք. եթէ դու սիրում ես ազատ ապրել. եթէ քեզ հա-
մար նույրական և սուրբ է հայի անունը, պատիր, հայրերիդ ու պապերիդ

արիմով ներկաս եկեղեցին, լնտամեկան սրբութիւնը և օշակը, ապա ժամանակ է որ դո զենք ձեռքի պաշտպան հանդիսանա վտանգուած հայրնիքիդ:

Հայ Զօրապետներ, յիշեցք հայրենիքի և եկեղեցու պաշտպան Ս. Վարդանին, վերցրէք ձեր գիւարկներ, խաչակնքեցք ձեզ յանուն հայրենիքի և սուրբ ձեռքի խոյացք արծորդն թշնամու վերայ և թող ձեր սպայսկուտը և քաջարի զինուր ձեր յետից բազեների նման հետևեն ձոզ: Երկու տարայ հեանքը նեզ սովորեցրեց, որ մենք պէտք է պաշտպաննենք մեր հայրենիքը, օտարը մեզ չօգնեց և չի օգնելու: Հայ քաջարի զինուր, դո ք բաշութեամք և անվեհերութեամք աշխարհի զարմացրիր, հաւաքիր ուժերդ վերջին անգամ, տուր միանգամ էլ քո մահացու հարուածը հայրենիքի և հայի ազատութիւնը ջնշել ցանկացող անողորմ թշնամուն: Հաւատա և հաւատա թէ քո այդ վերջին հարուածով յախտեան կը ջախչախես թշնամուն անկանգուն կերպով որովհետև սա նորա վերջին յուսահատական կոհին է, կամ ոչնչանալ յախտեան և կամ ոչնչացնել քեզ:

Հայոց Հայրապետ, ձեզ է ողղում իր խօսքը մեծ հայաստացիներ, Կարմեցի, Մշեցի, Սասունցի քաջեր և դուք Վասպորական աշխարհի Մոկաց, Շատախի, Ռշտունեաց և Խիզանի առինձներ, ելեք, վերցրէք ձեր սուրբ ու հրացան վազէք դէափ կոռոի դաշտը, հանդէս ելեք ձեր բազուկ-ցերով և սրբով ձեր առին բրդերի դէմ, ցոյց տեք, որ դուք դեռ կաք ու չեք մեռեր:

Գնացէք կոռուցէք քաջաբար և ձեր սրերով մաքրեցէք ձեր ճանապարհ դէս մոխրացեալ վաթանը Մուշն ու Սասուն, դէափ Ս. Կարապետն ու Ախտամար: Իսկ դուք Սրարատեան աշխարհի հարազատներ, Վաղարշապատի, Օշականի, Աշտարակի, Սարդարապատի, Սպարանի, Շիրակի, Մաղլաձորի և Գեղարքունեաց զաւակներ, թողէք ծերերին, ձեր մայրերին և քրյերին ձեր տնային աշխատանքներն, ձեր ազատութեան վւաճ է սպառնում, թուք դէափ սահմանագույններ, յիշեցէք Ձերկան ու Սարտարաբատ, որտեղ ցոյց տուիք ձեր քաջութիւնը, որտեղից թշնամուն հայածական փախցրիք. ելեք ի հանդէս. ներքին թշնամիները մաքրեցիր, մաքրիր քաջաբար և արտաքին թշնամուն որպէս զի Մասիսի գլխին տընկուած հայկական դրօշակը անսասան մնայ:

Ելեք և դուք հայոց փոքրիկ հօտի, փոքր հովիւներ, ելեք հայ ովտապահ երէցներ. հարէք եկեղեցու զանգակներ. վերցրէք ձեր խաչն Աւոնդեանց նման և մտէք հայ բանակի շարքերը. խրախուացէք ձեր զաւակներին, հայ քաջարի զինուրին, թող տեսնի նա իր կողքին իր հարազատին և ովեռուի հայրենիքի և սրբութեանց սիրովն ու կրակովն. ելեք և կատարեցէք ձեր ովտան ու պարուքը:

Ես հաւատում եմ, իմ սիրեի ժողովուրդ ք քաջութեան, ես հաւատում եմ ք անշեղ հարուածին. ես հաւատում եմ Հայաստանի հզօր Աստուծուն և նորա սրանչելիքներին. նա որ տուեց ուժ ու կարողութիւն մեր մի բուռն քաջերին, երկու տարի անընդհատ հարուածելու հայրենիքի և եկեղեցու թշնամուն. նա այս անգամ ևս կը տայ հայրենիքի քաշերին, փառաւոր յաղթանակը և խրոխտացած թշնամուն խորտակուած ցիր ու ցան կը հալածէ.

Գնա՛, հայ ժողովուրդ, գնա հաւատով դէափ մարտի դաշտը, քեզ օգ-

Աական Փրկչի Ս. խաչը, քեզ պահապան մեր Ս. Լուսաւորչի հզօր Աջը և
քեզ ուղեկից Հայոց Հայրապետի աղօթքն ու արտասութը:


ԳԵՂՐԳ. Ե.


Կաթողիկոս ամենայն Հայոց

ՀՀ Հոկտեմբերի 1920 ամի և ըստ
տոմարիս Ռ. Յ. Հ. ի Հայրապետու-
թեան մերում թ. ամի յԱրարատ-
եան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.

Թ. 553

Ֆ. 57, գ. 5, գ. 222, թ. 52





ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՇԱԳԻՐԸ


Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղարկել է Բաթում Մ. Պապաջանյանի և Ա. Խատիսյանի անունով հետևյալ հեռագիրը մայիսի 16-ին:

Կոչելով Աստծո օրինությունը հաշտարար պատվիրակության գումարման վրա և աղոթելով Ամենաբարձրապին արդյունավետ գործունեության համար և ցանկանալով բարի մկրտչքի եզր Կովկասի ապագա բարեկեցության համար, առաքելով հաշտարար պատվիրակության բոլոր անդամներին, և կողմերի ներկայացուցիչներին մեր Հայրապետական օրինությունը, խնդրում եմ ամենքին ներկա դեպքերի և պատերազմական գործողությունների ժամանակ պաշտպանել ամբողջ Կովկասի խաղաղ ազգաքնակչությունը, ինչպես և նաև պատերազմական գործողությունների շրջանում և այլ վայրերում գտնվող հայ ժողովորդը կոտորածներից, նաև հինավորց պատմական Էջմիածնի վանքը ու մեր նախնիների գահը, բոլոր նվիրական հուշարձաններով պահպանել ավերումից ու թալանից:

ԳԵՎՈՐԳ 5-ՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՀԱՅՈՑ ՊՊԿԱ. Հիմք՝ Փոնդ 57, ցուցակ 5, գործ 94:





ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ԿՈՆԴԱԿ

Գերջերս Գերմանական Ֆեդերալ Հանրապետության մայրաքաղաք Բոնի քաղաքական արխիվից ստացվեց պատմական մի կոնդակի լուսապատճենը, որ համարակարգած է 11063-ի տակ (Ռուսիա № 97ա № 1 թղթածրար): Կոնդակն ստորագրած է Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոս¹ և կրում է Յ օգոստոսի 1918 թ., նոր տոմարով: Այն ուղղված է Կայսերական Գերմանիայի Վիլհելմ Բ կայսեր²: Խնչակն պարզվում է, կոնդակը գրված է Համաշխարհային Սուածին պատերազմի ավարտից շուրջ երեք ամիս առաջ:

Կոնդակի բովանդակությունից պարզվում է, որ 1918 թ. հունիսի 31-ին Ս. Էշմիածին է այցելել գերմանացի զորավար-մայոր Կրես ֆոն Կրեստայնը և հանդիպում ունեցել Գևորգ Ե Հայրապետի հետ: Այս առթիվ զրված է սույն կոնդակն և հավանաբար այն հանձնված է նույն զորավարին, Գերմանիա իր վերադարձին այն փոխանցելու երկրի կայսեր:

Սույն կոնդակի բովանդակությունից հայտնի է դառնում, որ հայոց Հայրապետը, տեսնելով իր ժողովրդի թշվառ և անօգնական վիճակն և այդ օրերի պարենամթերքի խիստ պակասությունը, Գերմանիայից խնդրել է ցորեն և այլ հացահատիկներ, ժողովրդի կարիքը նվազագույն չափով բավարարելու համար: Հայտնի չէ միայն, որ գերմանական կայսրը որևէ արձագանք տվել է, թե ոչ:

Հայտնի է, որ Հայաստանի հանրապետությունն այդ օրերին գտնվում էր խիստ վատ պայմաններում: Պատերազմական վիճակը, երկրի քայլայիւած տնտեսությունը, գյուղատնտեսության անկումը, հարևան թուրք և աղբբեջանցի թշնամիների հաճախակի հարձակումները, 1917-ի ոռոսական հեղափոխությունը, խնչակն նաև Արևմտյան Հայաստանից հարցուր հագարակոր հայ փախստականների ժամանումը, աղետալի և ճգնաժամային



ՀԱՐԴԻ ԽՈՍՔԵՐՈՒՅՑԻ ՔՐԵԱԿՈՒՅՔ

ԱՆՀԱՍՏԵՎ ԿԱՅՈՐՆ ՍԱՏՈՒԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՄԵՐԵ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՆ ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ ԾԱՑՐԱԳՈՅՆ
ՊԱՏՐԻԿՐ ՀԱՄԱՉԳԱՎԱՆ ՆԱԽԱՇԵԱՐ ՄԵՋՈՒՑ ՄՐԱՐԱԵԱՆ՝ ՍՈՒՐԵԼԱՎԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՆ ՄՐՈՅ
ԿԱԹՈՂԻԿԵ ԵԶՄԻԱՄՆԻ և Օգոստական յօհու Գլուխ և առ Խաչուած
Երանեց Հայոց Կ պատմական ազգի առաջնային և օրէականական

Prepared by Organization

2017-18 学年

Upland meadows, as I judge Pd.
most of them are marshy but con-
tinue to grow well & they do
you bid: 1st B road, a few feet
down from the hill a meadow & then
up - grasses. You can see
nothing's long & tall grass - in fact
I don't think there's anything in particular
of interest. There are a few

Allerdurchlauchtigster, allernädigster
Kaiser und König

Durch das Schicksal meines Volkes
auf das schmerzlichste bewegt nehme
Ich mir den Mut. Eure Majestät mit
meiner Bitte zu belästigen

Der gegenwärtige Krieg hat besonders schwere Folgen für das armenische Volk gehabt. Alle Gebiete von Türkisch-Armenien sind von dem armenischen Element entvölkert. Der grösste Teil desselben ist in Türkisch-Armenien massakriert worden oder durch allerlei Entbehrungen und Verfolgungen hingerommen. Der am

խիստ վիճակ էին ստեղծել նորաստեղծ Հայաստանի հանրապետությունում: Օրվա կառավարությունը չէր կարողանում կայունացնել երկրի քաղաքական և տնտեսական վիճակը: Որով Գևորգ Ե կաթողիկոսը նվազագույն չափով թերթեացնելու համար ժողովրդի վիճակը, դիմել է այդ քայլին, հացամթերք խնդրելով նույնիսկ հակամայ քաղաքականություն վարող Գերմանիայի թուրքաւեր կայսրից:

Կոնդակը գրված է երկու լեզվով՝ հայերեն և գերմաներեն: Կոնդակի ձախակողման կեսը գրված է Գևորգ Եպիսկոպոս Զորեքչյանի³ ձեռքով, հայերեն մասը Շոտրգրով, իսկ աջակողման կեսը գերմաներեն գեղեցիկ շղագիր տառերով, գրված շատ հավանաբար Մայր Աթոռի միաբաներից մեկի ձեռքով, որ ստվորած կիներ Գերմանիայում:

Ստորև տրվում է կոնդակի հայերեն մասն ամբողջությամբ:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԾԱՆՈԹ. 1. Գևորգ Ե Տփղիսեցի Սուրենան (1847—1930), վարդապետ 1872-ին, եպիսկոպոս 1882-ին և Ամենայն հայոց կաթողիկոս 1912—1930 թթ.:

2. Վիլհելմ Բ (1859—1941), Գերմանիայի Կայսր և Պրուսիայի թագավոր 1888—1918 թթ., բոռոք Հոհենցոլեն Վիլհելմ Ա. կայսեր: Վարել է հակամայիկական քաղաքականություն և միևնույն ժամանակ աշակել երիտրուրքերի կառավարության իրավանացնելու համար հայ ժողովրդի բնաշնչման հրեշտակոր ծրագիրը: 1918 թ. նոյեմբերի 9-ին գահընկեց է արվել, փախել Հողանդիա և նույն ամսի 28-ին հրաժարվել գահից: 1941-ին մահացել է Հողանդիայում:

3. Գևորգ Զ Զորեքչյան (1868—1954), վարդապետ 1913-ին, եպիսկոպոս 1917-ին և Ամենայն հայոց կաթողիկոս 1945—1954 թթ.:

(Հայրապետական կնիք)

(Տպագիր)

ԳՀՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ անհասանելի կամօքն Սասունյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համագֆական նախամեծառ Աթոռոյ Սրարատեան Առաքելական Մայր Եկեղեցոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի (ձեռագիր) առ Օգոստավառ Կայսրն Գերմանիոյ և առ Թագավորն Պրուսիոյ Վիլհելմ Բ. թագմասցի ողջոյն առաքելական և օրինութիւն տիրատան:

Ամենառողմած և Օգոստավառ Կայսր և Տէր Թագավոր,

Խորապէս յուզեալ ի սիրտ վշտակիր առ ծանր քաղդ հօտին իմոյ, համարձակութիւն առնում յանձն՝ դարձուցանել զուշ և զորորշ Կայսերականի Զերոյ Մեծութեան ի խնդիր, որ դնի առաջի Զեր:

Սրբակիրք պատերազմին, որ ի Եւրկայս միջի, առանձնապէս ծանրացան քաղմակիսի հետևանօք ի վերայ Ազգի իմոյ՝ Հայ ժողովրդեան: Մէն մի շրջան, որանոր ուներ ժողովուրդ իմ նիստ և քնակութիւն Տաճկական-Հայաստանի, իսպատ գուա ամայացեալ ի հայ ազգաբնակութենէ: և կամ ի ձեռն քաղմակիսի հալածանաց և զրկանաց ի կորուստ մատնեցաւ նա

անմեն: Խոկ որոց վիճակեցաւ բաղդ կերոյ տակաւին, նոքա գոտան ապաստան մեծաւ մասամբ ի նորածինս անկախ Հայաստանի և կամ ապահովացան ի սահմանակից վայրո, որ առ մեզ:

Սեփականութիւն ամենայն, որպէս և արդինք հնձնու, տարամերժեալ ի հայրենի բնակութեանց իրեանց հայ ժողովրդեան եղեն աւար և բոր սաճկաց: Թի ժողովրդեան իմոյ, որ ի սահմանն նորակերտ Հայաստանի, եւանձ ցիւս միլիոն, այլ մնացորդք և բնեկորք Հայութեան գոտանին ի Վիրու, որպէս և ի նորակազմ Աստրապատականի, այլ և ի սահմանն Հիւսիսային Կովկասու, որոց թի եղանէ շորջ երեք հարիոր հազար հոգուց: Ամենեւթեան ընդ հարաւային գտանելով շերմ երկնօք զհանգիստ, զրկեալ յօրապահիկ սննդոց և հացէ խոկ աշոտուշ, նեղեալ ի տապոյ, ենթակայ ցրուոյ և այլ պատահարաց, որքան զօր առաւելան թի զոհից և մահացութեանց:

Յ16 Յուլիսի տարուոյ եղև օր առանձինն հաճութեան յաչս իմ, զի յայրմ խոկ առոր բերկրութեամբ ընկալայ զներկայացուցիչ Կատավարութեան Զերդ Կայսերական Մեծութեան, զգեներալ-մայոր Կրեսս ֆոն-Կրեսսուայն ընդ հովանեաւ Մեծի Աթոռոյս: Զվշտակցութիւն շերմ, զոր եցուց հա առ Մեզ, վասն մեծի տառապանացն և վշտակրութեան, որոց ինքնին խոկ ականատես լեալ եր վկայ, վատահութիւն աներկրայ տան յաչս Մեր՝ եթէ ոչինչ ամեննին դանդաղեսցի զեկուցումն ամենախոնարի արկանել մեծի տէրութեանդ զիրացն: Յայն հաւած աներկրայ յուսացեալ եթէ Կայսերական Մեծութիւն Զեր չունի զլանալ զօգնականութիւն իր ողորմած առ հօտին իմոյ, համարձակութիւն զգենում հրափրել զուրուշ բարձր և բարեմիտ Կայսերականիդ Մեծութեան Զերոյ առ այն, զի եթէ դանդաղեսցի հասնել զակնելավան օգնութիւն ի փոյթ ժամանակի առ մեզ, ապա վերս ժողովրդեան իմոյ ունի փոխարկել յանրութեի ցաւ մահու, քանզի նորակազմ Հայկական տէրութիւն ի վիճակ նեղասգոյն ածեալ սահմանից, չունիցի ամեննին հնարս գտանելոյ տեղի բնակութեան և սննդեան մատակարարութիւն, հա զի և սահմանակից նորակազմ դրացի պետութիւնք ինքեանք խոկ կարօտին պարենից:

Ցաւ է ինձ ասել, այլ ստիպիմք յայդ, յայտ առնել մինչ ցարդ ամենայն աղերս որ առ բարձրագոյն ուղղեցան դուռն յայդ խնդիր կենսական, չետուն հետևան ինչ բարի:

Որպէս Պետ հնագոյն քրիստոնեայ եկեղեցւոյ, որ յարնելս և որպէս Հովուապետ հօտին և ժողովրդեանս, որ ի վաղ ժամանակաց հետէ անխախտ կայ ի հաւատու քրիստոնեութեան և հաւատարիմ առ քրիստոնեայ աշխարի ի գին անտանելի նեղասկրութեանց և զոհաբերութեանց, ի ձեռն գրութեանս գամ աղերս մեծագոյն արկանել առ Կայսերական Մեծութիւն Զեր, զի բազուկ զգնականութեան ողորմածարար կարկառեսչիք առ ժողովուրդն իմ, որ կայ յեւ կորստեան և ներշնչումն առ դաշնակից Պետութեան Գերմանական, առ Թիւրքիա, ունիշիք, զի վախճան տանջանաց և անշափ վշտակրական մարտիրոսութեան Հայ ժողովրդեան դիցի: Ելս ի վիճակին միմիայն հնարաւորութիւն ի հայրենիս և ի յարկս բնակութեանց իրեանց կրկին բարձր առնուզ տեսանեմք և տեր ամ(նենայն) սեփականութեան իրեանց լինելն գտանեմք: Արդ Մինչ ցայդ ի տես մեծագոյն վտանգի, որ առաջի ժողովրդեանս, միմիայն հնարաւորութիւն շուտափոյթ մերմուծութեան ցորենոյ և այլոց հացահատիկաց կարէ փրկել ի սովատանց մահուանէ զնոսա:

Հայցելով զԱստուածային օրննութիւն ի գլուխ Զեր Կայսերական Մեծութեան և Օգոստավիան ընտանեացդ
Կամ մշտամունչ աղօթարար՝


(ստորագրութիւն Հայրապետի)

ԳԵՐՐԳ Ե.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՒ ԿԹՂԿՍ. ԱՄ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ

1918

Յովիս 21/օգ. 3
ի Ա. Էջմիածին
(կմիր)





ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵՍՆ

Պատմական գիտութիւններու դրկտոր

1915 ԵՒ ԱՆԳԼԻԱԾԻ ՀԱՅԱՍՏԱՆԵՐԸ

Որքան տարիները կ'անցնին Քսաներորդ դարու առաջին ցեղասպանութենէն, Թուրքիան այնքան աւելի կ'ուրանայ իր գործած ոճիրը: Քաղաքական և տնտեսական հըկատումներով ոչ Ամերիկայի Միացեալ Նախանձմերը և ոչ այ Խորհրդային Միութիւնը ցարդ պաշտօնաալէն ճանչցած են 1915—1920-ի եղեննը: Թօքական կառավարութիւնը, թուրք պատմաբաններ և իրենց արքանեակմերը կը համարձակին նոյնիկ յայտարարել թէ: «ցեղասպանութիւն չժրագրուեցաւ կամ չիրահանգուեցաւ Օսմանեան կառավարութեան կողմէ և ցեղասպանութիւն չգրդադրուեցաւ»: թէ՝ շարդերու պատմութիւնները մեծ մասամբ հնարուած են հայ ազգայնական առաջնորդներու կողմէ Փարիզի և Լոնտոնի մէջ Համաշխարհային Ս. Պատերազմի ընթացքին և տարածուած Անգլիական գաղտնի ապասարկութեան կողմէ: թէ 1915-ին Կայսրութեան հիւսիս-արեւելքը ապրոյ հայեր պատամբեցան Օսմանեան կառավարութեան դէմ, որ պարզապէս տեղափոխեց հայերը պատերազմական գօտիէն դէպի կայսրութեան միւս մասերը¹:

Դժբախտաբար այսօր այս տեսակի խեղաթիւրումներով լեցուն աւելի մեծ թիւով գիրքեր կան Արեւմտեան գրադարաններուն մէջ Հայկական Բարցին մասին, քան ճշմարտութիւնը բացայալող ուսումնասիրութիւններ: Այս լոյսին տակ որքան մեծ հշանակութիւն ունի այս գիտաժողովը կազմակերպուած Մայր Հայրենիքին մէջ:

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ: Թուրքիան 1915-ի ցեղասպանութիւնը կ'ուրանայ գործածելով պետական իր բոլոր միջոցները: Ատեն է, հետեւարար, որ Հայրենիքի և Սփիտքի գործակցութեամբ մէտեղ գայ Հայկական Դատի հետապնդման համահակական Մարմին մը, որ կազմակերպուած կերպով և կերպնացած ճիգով աշխատի ճշմարտութիւնը բացայալու մեր նոր սերունդին և աշխարհի հանրապէն կարծիքին համար:

Ցեղասպանութիւնը ոճիր մըն է մարդկութեան դէմ: Այսօր, շատ հակիրճ կերպով կը փափաքիմ ներկայացնել Անգլիացի մարդաւայրեներու—կարգ մը մտարուկաններու և եկեղեցականներու մտածումները մեր եղեննին մասին և իրենց կազմակերպութիւններուն գործունեութիւնները: Թուրքեր միշտ այ քաղաքական հկատումներ վերագրած են Դաշնակցներու այն ատենուան պետական անձերուն հակառակութիւններանց: Կ'արժէ ուրեմն գիտնալ թէ մարդաւայրեներ, որոնք նուազագոյն չափով քաղաքական ճնշումներու ենթարկուած պէտք է ըլլան, ինչպէս տեսած են այդ օրերու դէպերը: Ի՞նչ մկրբնադրիւններ կան մատտաւերներու արխիւններուն մէջ:

Օրինակի համար, Ռէնտու Տէլվիտսրնի՝ Անգլիքան եկեղեցիի պետ Գէնթրոպըրիի Արքապիկոպոսին անձնական թուղթերուն մէջ բազմաթիւ նամակներ կան որոնք

իլովին կը ներքեն թրքական պատճառաբանութիւնը թէ 1915-ի տեղահանութիւնները և ջադրերը զինուորական միջոցառումներ էին ձեռնարկուած պատերազմի ընթացքին հայ ժողովուրդին պատվելու կոչուած «դաւաճանութեան» առաջքը ստելու համար: Պատերազմը պատճառը չէր 1915-ի ցեղապահութեան: Արեւմտահայաստանի ամայացումը ընկերային, տնտեսական և քաղաքական պատճառներով վրայ հիմնուած և Երիտասարդ Թուրքերուն կողմէ նախակալարուած որոշումի մը գործադրութիւնն էր՝ սուենդերու միատարր ընկերութիւնն մը կայսրութեան սրբային, կենդրունական մասին վրայ, որ հայ ժողովուրդին համար տեղ չկար: 1910-ին արդէն Անգլիոյ Ռեսպանու գրեր էր թէ Երիտասարդ Թուրքերու քաղաքականութիւնը «ոչ-թուրք տարրերը թրքական սանդիմը մէջ ծեծել էր»:

Երբ Թուրքիոյ տնտեսական քայլապատճեն վիճակին վրայ առեցաւ Պարքանեան պատերազմներոյ հոգատացումը և Թուրքիա ստիպուած ընդունեց 8 փետրուար, 1914-ի հայկական Բարեկանորդություններոյ ծրագիրը, մթնոլորտը հաշերոյ Ակատիամբ ատելութեամբ թունակորեցաւ:

1913-ի դեկտեմբեր 10-ին, Գլխավորական Արքեպիհակոպոսը, հիմնուելով իր ստացած շատ մը համակներուն վրայ, Առաջին Առ-

1913-ի դեկտեմբեր 10-ին, Գևորգյալը իրի Արքեպիսկոպոսը, հիմնուելով իր տաւած շատ մը համակներուն վրայ, Առօդիոյ Արտաքին Գործերու հախարարին գրեց թէ Թուրքիոյ Հայերը իրենք զիրենք վտանգի մէջ կը զգային, թէ սպառնական համակներ որկուեր էին Ազգային Պատուիրակութեան հախագան Պոլոս Նուպարին և Հայոց Պատրիարքին: Արքեպիսկոպոսը ներփակեց հաեւ հետեւեալ բատկանչական սրարերութիւնը համակէ մը՝ գրուած Պոլոս մէջ ապրոյ հայ թժիկի մը կողմէ.

«Թրքական թերթերը միաձայնութեամբ կը յայտաբարեն թէ իրենք պիտի չըթուին եւրոպական հակողութիւն և այն. և կը սպառնան բնաշնչել Թուրքիու մէջի բոլոր հայերը եթէ 6 մէծ պետութիւնները համարձակին ճնշում բանեցնել թրքական կառավարութեան վրայ»³:

Վերոիիշեալ վկարութիւնները կը փաստեն թրքական թշնամութիւն մը հայերութատմամբ 1914-էն առաջ և մեծ չափով կը հերքեն թրքական շինծու պատճառարանութիւնները հայ ժողովուրդի դաւաճանութեան Ակատմամբ:

Անգլիայ մէջ հայ ժողովուրդին ճակատագրով հետաքրքրուող մարդասէրներու պատճառները թերեւս իրարմ; տարբերէին, բայց յաճախ իրարու յարակցուած; Դմանք, Ազատական աւանդութեամբ, Եւ-

բայսան եւ մասնաւորաբար Անգլիան քարոյապէս պատասխանատու կը պատտէին հայ ժողովուրդին դժբախտովթեան համար Պերլինի Դաշնագիրէն վերջ։ Մտաւորականներ եւ պատմաբաններ կը ցանէին որ Արևամտեան Սսիրյա ամենէն հիմ քաղաքակրթուած ազգերէն մէկը կը տառապէր։ Քուէլքըններու մօտ աւանդութիւն նրն էր չարչարուած համայնքներուն օգնել։ Խակ Անգլիաքան եւ միւս եկեղեցիներու պաշտօնեանները կը հիմանային քարոյական կորուին վրայ երկրի մը որ առաջին քրիստոնեայ պետութիւնը եղեր էր եւ որ դարերու Մահմետական տիրապետովթեան տակ, մերժեր էր իր հաւատքը ուրանալ։

Այս մարդականերուն և ի իրենց պատկանած խմբակցութեանց թուղթերը, մտերմորէն գրուած նամակները կը վկայեն թե բոլորն ալ համոզուած էին որ 1915-ի դեպքերը ծրագրուած են գործադրուած ցեղասպանութիւն էին:

Այս մարդասէրներուն ամենէն ականա-
տրն էր Լոր Շելս Պրաս, մեծ մուտո-
րականը, քաղաքագէտը և լեռնագնացը,
որ չափազանց մօտէն կը ճանչնար հպե-
րը: 1876-ին ան մագլցէր էր Սրբաւանի
գագաթը և իր տպատրութիւնները գրեթե
«Անդրկովկաս և Սրբաւան» գիրքին մէջ:
Ան միշտ հիացող մը մնաց հպերու ուշի-
մութեան, աշխատախրութեան և տոկո-
ւութեան:

Պրայս առաջինն էր որ Անգլիական խորհրդարանին մէջ Անգլիոյ և Բամաշխարհական Բանրային կարծիքին նկատողութեան ընթաց 1915-ի «ասրաւակելի ջարդեր»-ը: Անբողջական պատասխանատրութեամբը և Բեղինակութեամբը իր դիրքին որպէս նախագահ Բրիտանական Ազգային միհան և որպէս նախագին պետական նախարար, Դեսպան Միացեալ Նախանձերու և որպէս քաղաքացիական օրենսգիտութեան ուսուցչապէտ Օքսֆորդի համալսարանին մէջ, անձ մը որուն վատահելիութիւնը միշագգային կշիռ ուներ, Պրայս Հոկտեմբերին յայտարարեց թէ համաձայն իր ստացած տեղեկութիւններուն 1915-ի մայիսէն մինչեւ հոկտեմբեր 800 000 հայեր բնաշնորհ էին և ասիկա հաւանական թիւ մըն էր որովհետեւ գործադրուած առարքը եղած էր «այնքան բացարձակապէտ կամիսամուածուած» և համակարգուած (սիստեմատիկ)»:

Զանազան առաջնահերթ աղբիւրներէ,
մասնաւոն Ամերիկացի միսիոնարներէն
ստացած իր տեղեկութիւնները հաւաքելով,
Լորու Պրայս, օգնութեամբ Օքսֆորտին
պատմաբան Արնուո Շունահի և ռենուս

քաջալերանքով Անգլիական կոստալարութեան, 1918-ին խմբագրեց լուսերագրական գիրք մը Օսմանեան Կա սրբութեան մէջ Վերաբերումը Հայերու նկատմամբ 1915—1916-ին, որ, ինչպէս ինք ըստ է, «Վաւերական արձանագրութիւն մըն» և 1915-ի պատահանձերուն «արտմական ճշմարտութեան ի խնդիր»⁵:

Նօրը և Հարցը Պարագը եղարքները, նմանասէն, մարդասիրութեամբ տոգորուած հայասէրներ էին, որոնք կը ճանչնային հայերը շատ մօտէն: 1913-ին երկու եղբայրները միասին զացեր էին թէ Թոքահայտասն և թէ Ռուսահայտատան ուստմասիրներու հայերու պարմաները: Հայերու որիշ մէկ ջատագովն էր օրիորդ Եմրի Ռուպինարն: Ան Հայաստանի մասին իմացեր էր իր հօրութեան, մէկը Լոնտոնի Ազգաւական Տէլի Նիուու թերթին համբագիրներն: Խստաբարոյ անձ մը, օրիորդ Ռոպինարն էր պահէր թէ գիտնալ ոճիրի մը մասին և մասնակից ըլլալ զայտ ծածկելու ինքնին ոճիր մըն էր⁶:

Անգլիոյ մէջ 1915—1920-ի շրջանին ամենէն գործօն և ազենցիկ քաղաքական խմբակը Բրիտանական Հայաստան Կոմիտեն էր, բաղկացած շարք մը Անգլիացի երեսինամենքը և մտարուականներէ: Ատենապետն էր մարդասիրութեամբ և հայասիրութեամբ տոգորուած Ընկորքն Ոիլերն: Բրիտանական Հայաստան Կոմիտեն Հայաստանով հետաքրքրուող և հայ դատին Շուիրուած ընտրեալ խմբակ մըն էր: Ան ընդհանրապէս չաշխատեցաւ ըլլալ զանգուածային մարմին մը և չկազմակերպեց զանգուածային ցոյցեր: Բայց ջանաց տեսակցութիւններով, լուշագիրներով, յօդուածներով և Անգլիական Խորհրդարանին մէջ յայտարարութիւններով ազդեցութիւն բանեցնելով քաղաքական վարկ ունեցող ազբեցիկ անձնարութիւններուն վրա:

Քաղաքական ճնշումի այս կազմակերպութեան զատ կային նաև բարեսիրական, նպաստամատոց կազմակերպութիւններ, որոնց նպատակն էր օգնել թրքանակ կեղերումներու և անցութեանց հայ զոհերուն: «Քուէլքրըններու Կրօնական Ընկերութեան Հայկական Բաժինը» 1881-էն պահեալ թժշկական խնամք, կրթութիւն և ձեռագործի ուսուցում հայտաբեր էր Պոլսոյ մէջ և 1922-էն Վերջ՝ Գորքուի մէջ: Իր տարեկան տեղեկագիրները, Պոլսէն յրկուած, ունին պատմական արժէք: Օրինակի համար 1915-ին գրուած ձերականութեան մասին «երեւելի հայերու, որոնց մէ ոմանք կախաղան հանուած էին քա-

րաքին մէջ, որիշներ աքսրուած եւ սպանենուած ճամբան»: 1919-ի Մայիսին Անն Հարիս Պոլսէն գրեր էր «անգլութեան ահաւոր հեղեղին» մասին որ տեղաց հայ ազգին վրայ: 1919-ին օրիորդ Պըրձէն, դարձեալ Պոլսէն, գրեր էր թէ Անգլիոյ մէջ մարդիկ պէտք է գիտնային թէ կիներու, մանուկներու և ծերերու վրայ գործուած ոճիրները, չափազանց սարսափելի նկարագրուելու համար, «ցաւալիօրէն ճիշդ» էին: Որորուկներէն ունաք, գեղեցիկները, փրկուեր էին մատէն, հաւաքուեր և տարուեր մահմետական տուններու մէջ: Բայց հասարակ դէմքով մանուկները ենթարկուեր էին ամենէն ցաւալի տեսակէն դաման մահուան:

Բարեսիրական կազմակերպութիւններուն բոլորն ալ տարիներու ընթացքին իրենց գնահատելի բաժինը թերեր էին հայկական գաւառներու մէջի թշուառութիւնը ամոռքելու: Սակայն մինչեւ 1915 մեծամասնութիւնը հայ ծողովորդին ապրեր էր իր հողերուն վրայ և դրկուած նպաստը օգներ էր վերականգնելու հայերու աւերուած օճախները: Խնչ որ եկակիօրէն դաման էր 1915-ի շարդերուն և տարագրութեանց պարագանեան անձ էր որ ամբողջ Բնիկ հայ ծողովորդը արմատախիլ եղաւ իր պապենական հողերէն և շարտուեցաւ հովերուն և աւազներուն:

Գորովիին ունեցող նպաստամատոց կազմակերպութիւնները հնարաւորութիւնը չունեն յաղթահարելու այս հնկայական գործը: Հետեւաբար անհրաժեշտութիւնը զգացուեցաւ հիմնելու Համա-Անգլիական կազմակերպութիւն մը՝ «Հայ Գաղթականներու (Լոնտոնի Քաղաքապետիթ) Փուտը» 1915-ի հոկտեմբերին, երբ իմացուեցաւ թրքահայտամի լուրերուն «ասրսափելի» էութիւնը: Բացման հանդիսութեան խօսք ադիս Լորու Պրայս, կարտինալ Պոն և Լոնտոնի Քաղաքապետը որ դիմեց երկրի քաղաքացիներու բարեսրտութեան որովհետեւ ներկայան հաւանաբար «մեծագոյն ջարդ» էր որեւէ երկրի մէջ կամ որեւէ ցեղի որ երբեկցէ արձանագրուած ըլլար»: Ֆուտը շուտով ունեցաւ 5000 կանոնադրու նուիրատուններ և Գրասենեակ մը⁸:

Ֆուտին սերտօրէն և գործօն կերպով օգնեցին շատ մը եկեղեցականներ: Անկիքան եկեղեցին պէտ ԳԵնցըրպըրիի Սրբեակապուր Հայերու և թրիստուեայ Սուրբիններու ջարդերը թրքական կայսրութեան մէջ նկարագրեց որպէս ոճիր մը, որ իր «տարողութեամբ և սարսափով» հաւանաբար նմանը չուներ աշխարհի պատ-

մոլցեան մէջ: Ծատ մը եկեղեցիներու մէջ հանգանակութիւններ կազմակերպուեցան ինչպէս, 1916-ի Փետրուար 6-ին, որ ամբողջ երկրին մէջ նկատուեցաւ «Հայաստանի Կիրակի»⁹:

1916-ին երբ Ուուսական բանակները Թուրքիա մտան և գրաւեցին Էրզրումն ու Մուշը, զայդականներուն ումանք Ակսան Վերադառնակ: Հայ Գալթականներու (Լուստինի Քաղաքավետին) ֆոնտը ղրկեց թշչական դարձանում կազմակերպող խոսք մը, որ նախ այցելեց Հայկական որբանոցները Պարոի մէջ և Թիֆլիս: Խումբին անդամներուն Տօրճ Լոյտ Հօճքինի անձնական նամակները, մտերմօրէն գրուած իր կնոջ և եղբօր, կու տան վաւերական և սրտաճմիկ պատկերը հայ գաղթական մանուկներուն որոնք «կատարելապէս համըր» դարձած էին սպասափի ազդեցութեան տակ: Թիֆլիսի մէջ մանկանոցը կը ներկայացներ «ամենատխոր» տեսարանը¹⁰:

Հայկական Եղեռնին նոյնակէս անդրադաս են ժամանակակից պատմաքաններ, որոնցմէ պիտի յիշեմ մտածումները միայն Շ. Փ. Կուգի և Հարուտ Թէմփլրիի, աշնախի կշոր ունեցող պատմաքաններ, որոնց վատահեցաւ Անգլիոյ Սրտարին Գործոց նախարարութիւնը՝ խմբագրութիւնը «Անգլիական Վաերաթուղթեր պատեռազմի ծագումի մասի 1898—1914» գործին՝ 11 հատորներով: Հանրային հասարացոյի մը ընթացքին կուու հայերուն 1915-ի պատահարները կոչեց պատմութեան արդի կամ թերևս ունէ ժամանակաշրջանի «մեծագոյն տառապանքները»¹¹: Իսկ Հարուտ Թէմփլրի, ոսուցչապէս Գէմպրին և 1933—34 թուականներուն նախագահ Միջազգային Պատմագիտական Համագումարին, Հայկական հարցին անդրադաս իր և Ա. Կրանթի «Երրոպա 19-րդ և 20-րդ դարերուն 1789—1932» գիրքին մէջ:

Իր ուժեղ անհատականութեանը և պատմական Վաերաթուղթեր արծենորելու գրեթէ անգերազանցելի փորձառութեամբ, Թէմփլրի որոշապէս պիտի շընկրէր իր վեհոր տալու Հայկական հարցին նկատմամբ: Սզգայնական թուրքերուն վրայ որրաւ ան մեղադաքը անպիսի ջարդերու և անգութիւններու «որոնց նմանը Վաերական ականատեսներ ասկէ առաջ երեք պատմած չէին»: Էնվեր-Քեմալի փորձը «բնաշնչելու» ամրող ազգ մը ոճիր մըն էր «քացարձակասիւ աննախաղեպ պատմութեան մէջ»¹²:

Իրենց խիդճին հաւատարիմ եղող մարդասէրներու և մտարականներու այս

վկայութիւնները կը փաստեն թէ 1915—1920-ի ջարդերու և տեղահանութիւններու պատմութիւնները ոչ չափազանցութիւններ են ոչ այ հնարուած Դաշնակիցներու կողմէ քաղաքական նկատումներով: Այս միշտցառումներու պայտակն էր «մաքրագործումը» ցեղին, բառ մը երեք անգամ գործածուած մէկ էջի վրայ ժամանակակից Ուիճարըն Չրչիլի կողմէ¹³, կամ ամայացումը Սրեմուտահայատանին, որուն անդրադաս Սրտարին Գործերու նախարար Լորտ Գլորզը Լօզանի մէջ, երբ շեշտակի հարցոց համեթ հնեօնիի թէ Փոքր Սահոյ Հայ բնակիչները «իրենք զիրներ սպաններ էին թէ կամաւոր կերպով փախեր»: Ինչո՞ւ հարիւր հազարաւոր հայոր հիմա փախատական էին աշխարհի բոլոր երկիրներուն մէջ¹⁴:

Չափազանց շատ են Հայկական ցեղասպանութեան ականատեսներու և ժամանակակիցներու սպասափի վկայութիւնները: Այսօր, 75 տարիներ վերջ ամենէն սպասիւմն թերեւս այն է, որու Ռէնտրը Տէլվիտարը, Գէներըրարիի Սրբեպիսկոպոսը մարգարեացումով մը գրած է, իր հաւաքածոյին մէջ տակաւին գոյութիւն ունեցող շատ թանկագին թուղթի մը վրայ: Կը թուի թէ ան օօթեր առած էր կարեւոր եղոյի մը համար զոր պիտի ընել Լորտերու Պալատին մէջ: Նախադասութիւն մը Սրբեպիսկոպոսի օօթերէն կը կարդացոյի:

«Ի՞ն վախս այն է որ պատմութիւնը այս սպասափիներուն և ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ կրնան նոոցոյի համաձայնութեան մէջ»:

Յատկանշական է որ «մեր խոստումները» բառերը ընդգծուած են երկու անգամ¹⁵:

Սրդարներ, հակառակ հայասէրներու բուռն ջանքերուն, սրտերազմէն վերջ արդարութիւն չտրուեցաւ հայ ժողովուրդին: Դաշնակիցները, դժբախտաբար, բայց բնականաբար, առաջնորդուեցան միայն իրենց նեղ ազգայնական շահերէն: Մուտքուի Զինադադարով, կնքուած 1918-ի Հոկտեմբերին՝ ջախչախուած Թուրքիոյ և յադրական Դաշնակիցներուն, բայց մասնաւորաբար Սմելիոյ միջեն, ոչ միայն Հայկական նահանգները ձգուեցան թըրքական իշխանութեան տակ, այլ նաև գէներերու և բանակներու զինաթափում մը չպարտադրուեցաւ հոն: Գաղթական հայեր երեք ջլրցան վերադառնալ իրենց հօրենական օճախները:

Զինադադարը բուռն կերպով քննադատուեցաւ հայասէրներուն կողմէ: Լորտ Պրայս դատապարտեց զայն որպէս «խուշոր սիսակ մը... որուն պայմանները գրուեր

էին թիշ մտածումով և առանց կանխատեսութեան» աղնախիս ատեմ մը երբ Թուրքիան «Դաշնակիցներու գութին եւնշակայ էր»: Ու վշտացած աւելցոց. «Թուրքերուն շնորհուած անպատիծ մնալու դրութիւնն է... որ զիրենք հակամատ կ'ընէ անձնաւուոր ըլլալու իրենց հիմ վայրագոյթեան»¹⁶: Զինադադարին ճախտութիւնն էր որ յետագային կարելի դարձուց Քենապական յարձակումը Երեսմի Հանրապետութեան վրայ 1920-ի աշնան, մինչդեռ 1918-ին թուրքերը, ըստ «ընդհանուր վկայութեան» գառնուկներու նման հյու էին, Ասֆ. Շեյմարզ, Հարվըրտ կրթուած զաւակ Գանատացի Միսիօնարի մը, որ գոեթ էր իր ամբողջ կեամբ Թուրքիոյ մէջ անցուցած էր, զիեց Պոյիսէն¹⁷:

Հակառակ պատերազմի ընթացքին Թորքահայաստանի ազատագրումին նկատմամբ Անգլիոյ և Դաշնակիցներուն ըստ բազմապիսի խոստումներուն Սերի Դաշնոք թուղթի կտոր մը միայն մնաց, իսկ Լոգանի Դաշնագիրը «Հայատան» բառն իսկ չունեցաւ: Անգլիա հրապուրուեցաւ Միջազգետքին վերջինին ունեցած քարիդին, բանապահի դաշտերուն և Պարսից ծոցին վրայ իր ունեցած ուազմական դիրքին համար: Բայց ըստ Անգլիայի հայասերներն, այս տեսակի բնական առանձնութիւններ և բնական հարատութիւններ չկային Հայատանի մէջ¹⁸: Չունքինք նաև բնակչութեան խոշոր թիւ որ Մեծ Պետութիւններուն համար կը հշանակէր շուկա: Անգլիոյ Աշխատարարական Կուսակցութեան Միջազգային Հարցերու Խորհրդատու Մարմինը, մեծ մասամբ բաղկացած մուտքարականներէ, 1919 նոյեմբերին ցատկ պիտի մարգարէանար թէ անհաւանա-

կան էր որ ունէ Մեծ Պետութիւն Հայաստանի վրայ նովակարութիւն մը (մէստէյք) ընդունէր, որովհետեւ ատիկա պիտի ըլլար «պարտարեցնող բեռ մը և ոչ շահաւոր»¹⁹:

Էնըի Ծովականը նոյնիսկ իր առողջութիւնը կորսեցուց, դառնացած որ Դաշնակիցները ամէն բան կ'ընէին տեսնեական զիջումներ ապահովելու համար, փոխանակ իրագործելու Թորքահայաստանը ազատագրելու իրենց խոստումները: Ան ցաւով գրեց թէ ծովակալ Գօրդի Շեաթը և իր Ամերիկան ընկերութիւնը կարգադրութիւններ՝ կ'ընէին երկաթուղաժիծեր օգտագործելու և հանքահորեր փորեկու «Հայերու սեփականութեան վրայ»: Ուրեմն թուրքերը Դաշնակիցներուն կողմէ արտօնուելու էին տարագրելու և սպանելու հայերը և յետոյ ալ անոնց սեփականութեան վրայ իրաւունքներ ծախելու Ամերիկացիներուն²⁰:

Անգլիացի հայասերներուն արխիւները ցոյց կուտան թէ ծողովուրդներու մէջ մարդաբերներ և քրիստոնեաներ կրնան գրտնուի բայց մարդաբեր և քրիստոնեայ պետութիւն կամ մարդասիրական և քրիստոնեական քաղաքականութիւն գոյութիւն չունին:

Միւս կողմէ, այս արխիւները ցոյց կուտան հաւաք, թէ հայասեր պատերազմն վերջ իրենց զգացած դառն յուսախարութեանց, Անգլիացի հայասերները ունեցած ուրախութիւնը, Հարցը Թէմփրըլիի բաներով, որ ցեղասպանութեան դաին նախատեսկ ձախողած էր «գերմարդկային հաստատանութեանը շնորհի հայ ժողովուրդին»²¹:

ՆՈԹԵՐ

1. Setting the Record Straight on Armenian Propaganda Against Turkey, Publ. of Assembly of Turkish-American Associations (Washington, D. C., 1982), pp. 4—8. «A Message to Members of the European Parliament...» in The Guardian, 16 July, 1987, p. 9.

2. British Documents on the Origins of the War 1898—1914 (BDOW), IX, I, p. 207, Lowther to Grey, 6 Sept. 1910.

3. Davidson Papers, Box on Armenia, Archb. of Canterb. to Grey, copy, 10 Dec. 1913.

4. Hansaru, 5th Ser. 1915, XIX, cols. 774, 1001.

5. Parliamentary Papers, 1916, XXXIII, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916, pp. XVI, XXI.

6. Ararat (London), vol. I, No. 2 (Aug. 1913), pp. 40—42.


7. Religious Soc. of Friends, 033.3 Friends Armenian Mission Reports for 1915, 1918—1919. Friend of Armenia, New Ser. No. 73 (June, 1919), p. 9.


8. See Akaby Nassibian Britain and the Armenian Question 1915—1923 (1984), p. 63.

9. Ibid., p. 64.

10. Hodgkin Papers, Journal, f. 12, Hodgkin to Robin, 24 Apr. 1916; f. 20, Hod-

- gkin to Mary, 28 Apr. 1916; Hodgkin Papers, Hodgkin to Mary 30 June 1916; *ibid.*, 2 July 1916.
11. Aram Raffi (ed.), *Armenia and the Settlement* (London, 1919).
 12. Grant A. J. and H. Temperley, *Europe in the Nineteenth and Twentieth Centuries*, 5th edn. (London, 1939) pp. 567—71.
 13. Winston Churchill, *The World Crisis—The Aftermath* (London, 1929) p. 405.
 14. *Parliamentary Papers* 1923, vol. XXVI, pp. 178—179, 211—212, Conf. of Lausanne, 12, 13 Dec. 1922.
 15. Davidson Papers, Box on Armenia, 'House of Lords' paper, 17 Dec. 1919.
 16. *Contemporary Review*, vol. 119 (May, 1921) pp. 578—580. Bryce Papers, UB 25, Bryce to Scott, 28 Dec. 1921.
 17. Bryce Papers, UB 67, Chambers to Bryce, 14 Oct., 1919, 6 Apr. 1921.
 18. Akaby Nassibian *Britain and the Armenian Question 1915—1923*, p. 265.
 19. Labour Party Advis. Committ. on Internat. Quests. No. 103, Nov. 1919.
 20. Lambeth Palace Library. Douglas Papers, vol. 61, ff. 105—107, 109, Robinson to Douglas, 3, 12 June, 1923.
 21. Grant and Temperley, *Europe in the Nineteenth and Twentieth Centuries* (1939), pp. 567—571.





ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ

ՏԱՆՍ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ-Ի ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՀՅՈՒԹՅՈՒՆԸ

Սահակ Բ Խապայանը (1849—1940 թթ.) 1902 թվի հոկտեմբերի 12-ից գլխավորեց Կիլիկիայի Կաթողիկոսությունը: Հովվապետության ամբողջ շրջանը համընկապ հայության տառապանքի բազմաթիվ փուլերով, որոնց հայության ամառա պահանջնեցին ոչ միայն գերմարդկային ճիգեր, այլև բանիմացություն, համբերություն և քաղաքական հեռատեսություն:

Իր հովվապետության երկար տարիների ընթացքում Սահակ Բ-ը երեք անգամ ապրեց հայ ժողովրդի տառապալից երթը դեսի Գողգոթա: Նա դեռ չէր հասցել ամոքել հայ ժողովրդի վշտերն ու վերքերը, պարտել Կիլիկիո Աթոռի բարեկարդումը ու նրա հեղինակության իրավական ճանաչումը, երբ սև թուսակերը պարունացին Կիլիկիայի երկնակամարը: Ծերունազարդ հայրապետը մարգարեարար հայ ժողովրդին հանգանդում էր. «Փոյտուիկը կմոտենա. նոր արհավրանաց ամեր կուտակվին և մերկ ու անոթի ժողովրդով սպանանց պիտի առաջնորդիվ»¹:

Զարմանալի կանխատեսությամբ աւկած այս խոսքերը դժբախտաբ իրավանություն էին դառնալու: 20-րդ դարի սկզբին

¹ Կիլիկյան կափիծներ, 1903—1915 (Կիլիկիո Սահակ Բ Կաթողիկոսի համակները և կոնդակները. հրատարակության է պատրաստել Զաքարիա Պըտիկանը), Բեյրութ, 1927, էջ 73:

Օամանյան կայսրության տարածքում բռությունուն խոշորագույն իրադարձությունը՝ 1908 թ. երիտթուրքական շարժումը, որը դավաճանելով իր իսկ հոչակած «մարդասիրական» գաղափարներին, 1909 թ. ապրիլի 1-ին (նոր տոմարով՝ 18-ին) կազմակերպեց Սունայի համանգի ամրող տարածքի հայերի կոտորածը, որը մեկ ամսում խեց 30.000 անմեղ կիլիկիահայերի կյանքը²:

Հայությունը մեծ հույսեր էր տածում 1912—1913 թթ. Բայկանյան պատերազմում Օամանյան կայսրության պարտության Արկատմար: 1912 թ. հոյեմբերի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն կոնդակով Պողոս Նուարին ճշանակում է կաթողիկոսական պատվիրակ, որն իր հերթին ստեղծում է Ազգային պատվիրակություն: Վերջինի խնդիրն էր «մատուցանել Երկարացուցչաց, դեսպանաց և հախարարաց եվրոպական պետությանց զաղերս և գաւելիկացիր, բացատրել նոցա զիրավագործ կացություն տաճկահայոց...»³:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Համաձայնական պետություն-

² Յ. Պ. Պողոսյան, Հաճնի ընդհանուր պատմություն և Գոզան-դադի հայ գյուղերը, Լու-Ամելիս, 1942, էջ 568:

³ Տե՛ս Հ. Խ. Թոփուզյան, Խզիստոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952), Ե., 1978, էջ 163:

ների հետ մշտական կապեր պահպանելու համար Ազգային պատվիրակության նըստավայրը է ընտրվում Փարիզը: Պողոս Նուպարի գլխավորած պատվիրակությունը հարցադրումները է անում և բանակցությունները վարում Անտանտայի տարբեր շրջաններում, այն համոզմամբ, որ պետք է մեկընդհան լուծել Հայկական հարցը: «Հայկական հարցի կապակցությամբ թերացումը, —գրում է Ն. Սերոնցը, —Եվրոպայի խոհանքն ծանրացած մի արար է: Հայկական վերքերի նկատմամբ նրա պահած լուրջամբ չէ, որ կարելի է շնչել այդ արարը, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, եթե հոչակուս են աշխարհի վերականգնումը արդարության հիմքերի վրա»⁴:

Տիրապետության յոթերորդ տարում երիտրուրքական կառավարությունը ի կատար ածեց խոշորագույն ճամփարի՝ «Հայերի ցեղասպանությունը», որը մարդկության պատմության մեծագույն զանգվածային ոճագործությունն էր: Այն հավերժական խարանդրում է Թուրքիայի և Մարդկության պատմության մեջ»⁵, —գրում է կիլիկիացի հովուն պատմաբան Միլսոն Պաղծիօնլուն:

Մահվան քարավաններին մաս էր կազմում նաև ամբողջ կիլիկիահայությունը: Դեպի արևելք շարժվող ընդհանուր հուսահատության և արհավիրքի մեջ ապրող իր տարագիր ազգակիցներին հուսադրելու, քաշալերելու և օգնություն ցույց տալու համար Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսը 1915 թ. մայիսի 25-ին դուրս է գալիս Սույանայից և հասնում Հայեա՝ Մեծ Արքավիրքի առաջին «հանգրիւմներ»:

Ծերունազարդ հովվագետին արցունքով ու ողբով դիմավորում են տասնեակ հազարավոր կիլիկիահայեր: 10—12 օր տաժանելի հետինուն «ուղևորությունից» հյուծված տարագիրների համատարած դժբախտության մասին կաթողիկոսը ողբալով գրում է. «Հարուստ, աղքատ, վարժապետ, աշակերտ՝ ամենքն ալ նույն վիճակն ունին: Խալապես տիեզերական եղբայրություն է»⁶:

Կաթողիկոսին թույլ չի տրվում շարունակել մասնակ ճանապարհներով իր ուղևորությունը: Նա չի տեսնում Հայե-

պից դեպի Բաղդադ՝ 600 կիլոմետր ձգված անապատով՝ Դեյր-էլ-Զոր Գողգոթայի կիզիշ արևի տակ իր ազգակիցների զանգվածային խաչելությունը: Բայց և այնպես իր տեսած քայլմելի տեսարանները բավական են լինում, որպեսզի սգակիր կրոնապետը հուսալքված ու ցասում նաև դատապարտի մարդասիրության համար կոչված՝ Արևմուտքում գործող կազմակերպությունները: «Ու՞ր են Խաչի ընկերությունները, —գրում է նա, —Խաչին գործող ցեղի մը եթե ձեռք չերկացնեն, ինչու Խաչի անունը կարատավորեն. Վիրավոր՝ կինորեն, նյութապես, բարյապես, կրոնապես և մտավորապես վիրավոր մըն է հայ ծողովորդը»:

Արևմտահայերի զանգվածայից հահատակությամ և տարում «քրիստոնյա» կոչված ծողովորդների աշքերի առջն, առաջին քրիստոնյա ծողովորդի «մատղաց մանկությունը, մաքրամաքոր կուսությունը, խայտացող պատանեկությունը, խանդավառ երիտասարդությունը, խորախորհուրդը ծերությունը»⁷ անուր տանջաքններով վերանում էր անապատներում...:

Համաձայնական պետությունների պարագուիմները ծողովորդներին խոստանում էին առաջին համաշխարհային պատերազմից հետո հաստատել ազատության և արդարության վրա հիմնված կայուն ու մըշտական խաղաղություն: «Պատերազմի պիտի վերշանար խաղաղություն պարգևելով բոլոր ճնշված ազգերուն, որոնց մեջ Հայաստան ալ պիտի տիրանար իր կատարաւ անկախության»⁸, —գրում էր Արշակ Չոպանյանը:

Սշխարհացրի հայությունը հավաստում էր, որ այդ պատերազմի իրոք ծողովորդների ազատության և ինքնորոշման պատերազմ էր՝ ընդդեմ բռնադատողների: Ոչ ոք չէր կասկածում այն բանում, որ «չկա ոչ մի ծիր, որտեղ լինեն այնքան շատ ճնշված ու ստրկացված ազգություններ, որքան կան Թուրքիայում, սովորաբ լծի տակ: Հետևաբար, պատերազմի արդյունքները պետք է զիմանքութապես իրենց գցացնել տան ամենից առաջ Թուրքիայում, որտեղ ազատորեն պետք է կիրառի ինքնորշման իրավունքը»⁹:

⁴ Նիկողայոս Աղոնց, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 370:

⁵ Մ. Պաղծիօնը, Փոքր Ասիայի նոյների և նալերի ցեղասպանությունը (նոյնարեն լեզվով), Արմենիա, 1988, էջ 77:

⁶ Կիլիկիան կակիծներ, էջ 177, 179:

⁷ Նոյնը, էջ 198:

⁸ Հայաստանի կոչմակ, № 34, 1929, էջ 1073:

⁹ Տե՛ս Հուշամատյան մեծ եղեռնի, Բևրութ, 1965, էջ 831:

¹⁰ Կիլիկիան Աղոնց, Հայկական հարցի լուծման շորք, Ե., 1989, էջ 77:

1918 թ. Հոկտեմբերի 30-ին Էգեյան ծովի Լիմնոս կղզու Մուրդու հավահանգատի մոտ անգլիական «Ազամեմենոն» հածանափակած վրա կերպած զինադադարի պայմանագրով ավարտվեցին առաջին համաշխարհային պատերազմում՝ Համաձայնական տերությունների և Օսմանյան կայսրության միջև պատերազմական գործողությունները, որոնք ծավալվել էին վերջինի տարածում:

Կայսրության ոչ մահմետական ժողովուրդները ոգևորությամբ ընդունեցին ավերիշ պատերազմի պարտն ազդարարող հաղորդումը, պատերազմ, որի ընթացքում հայ ժողովուրդի շուրջ 1,5 միլիոն զավակներ ենթարկվեցին երիտրուրքական ազգայինացուցեապանների բարբարության կոտրածին¹¹:

Մուրդուի պայմանագրով Կիլիկիան անցնելու էր ֆրանսիական վերահսկողության տակ, սակայն Փարիզը կանգնած էր տնտեսական և այլ դժվարությունների առջև, ուստի համաձայնվեց, որ մինչև ֆրանսիական արշավախմբի ստեղծումը, Կիլիկիայի գրավումն իրագործեն անգիտական ուժերը:

1918 թ. նոյեմբերին Կիլիկիայի Մերսին քաղաքում այս դուրս եկավ Անտանտայի «առաջին» տերության՝ Անգլիայի գորքը և շարժմեց դեպի Տարտուն, Ադանա և մյուս քաղաքները: Համաձայնական տերությունների գրավման իշխանությունները խրախուսում էին վերապարած հայերի վերադարձը: Արհավիրքի ճանապարհները անցած ու փրկված Կիլիկիահայերը այդ իշխանությունների օգնությամբ և համագործակցությամբ սկսեցին վերադառնալ իրենց նախկին օշախները:

Կիլիկիայի մեծ ու փոքր քնակավայրերում Սատում, Հաճընում, Մարտաշում, Ալիթապում, Դյորթ-Յոլում, Ադանայում, Տարտուում և Մերսինում կրկին անգամ հնչում էր հայոց լեզուն, վերատեղծվում էին հայկական դպրոցները և մշակույթի օշախները, վերականգնվում քանդված օշախները:

Համբողիանուր ոգևորության պայմաններում, ուրախության արցունքներով, 1918—1919 թթ. հայրենադարձված 150 հազար հայ տարագիրների թվում էին ոչ միայն Կիլիկիայի, այլև ամբողջ կայսրության համանգներից տարագրված եղբայրներ բազմանդամամբ հայ ընտանիքների առան-

ձին երեխաներ՝ «10 հազար որբեր, որոնց ծնողները թուրքական վայրագության գոհ էին դարձել»¹²:

Վերջինների մկանամբ հոգաւարության դրսուրումը առաջնահերթ նշանակույթուն էր ստանում: Ուստի տարագրության դաժան ու անասելի փորձություններով անցած վերապրոցները զարմանալի կամքով ձեռնամուխ եղան առաջին հերթին որբացած երեխաների բազմակողմանի օգնությանը:

Հայարձնակ բոլոր քաղաքներում Սահակ Բ կաթողիկոսի հովանակուրությամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, բարեսիրական կազմակերպությունները, հնչան նաև Եվրոպայի ու ԱՄՆ-ի ազգանվեր անհատները միջոցներ հատկացրին նոր որբանոցների ստեղծման ու ծնողագործկան երեխաների խնամքի գործին:

1919 թ. վերջին Կիլիկիա վերադարձած «հայերը տեղաբաշխված էին հետևյալ վայրերում: Ադանայում՝ 80 հազար, Հաճընում՝ 8 հազար, Հասան-Բելլիում՝ 1000, Դյորթ-Յոլում՝ 12 հազար, Օմանիենում և շրջակայրում՝ 1000, Միսիսում՝ 1200—1500, Արդողուում՝ 1000, Խճիրիքում՝ 1200, Տարտուում՝ 3—4 հազար, Մերսինում՝ 2—3 հազար: 50 հազարից ավելի հայեր հաստատվել էին Մարտառում, Ալիթապում, Ջեյթունում և շրջակա գյուղերում»¹³:

1919 թ. հոկտեմբերի 7-ին Արանայում հրապարակված կոնդակում Սահակ Բ-ը դառնությամբ արձանագրում է. «Միրելի ժողովուրդ, վերապրած ու վերադարձած ձեր ծննդավայրը, մեր ամենուն անցյալ, ներկա ու ապագա փառքն եղող Կիլիկիան վերադարձ, սակայն, այնքան եղերական, որքան տարագրություններս եղերաբախտ: Որովհետև մեր վերադարձին գտանք քրիստով ու արյունով շինված տուններին քարութանդ, ձեռատունն այգիներին խոպանացած, կենսարեր ու հացանատ արտերն ու անդաստանները կորդացած ու խորդացած, կրթադասները բուերութեան, նվիրական տաճարները պրապահոված»¹⁴:

Հնչան ասվեց, վերադարձած աքսորականները ամբողջովին զուրկ էին գոյության միջոցներից: Նրանց պահանված

¹² Մ. Պաղծիոլու, Աշվ. աշխ., էջ 253:

¹³ Ռ. Գ. Սահակյան, Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան, 1919—1921 թթ., 1970, էջ 121:

¹⁴ Տ. Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիո, Կոմիակներ և Բայրական խոսքեր, 1984, Անդիլիաս-Լիրանան, էջ 56:

տներին, արհեստանոցներին և ունեցվածքն տիրել էին հիմնականում կայսրության խորերից վերաբնակեցված թուրքերը: Միայն վերապրածները կարող էին պայքարել իրենց ունեցվածքի համար, որովհետև երեսնի հայերով բնակեցված տների սեփականատերերի ճնշող մեծամասնությունն այսն գոյություն չուներ:

Սակայն այդ սակավաթիվ աքտորականների արդարացի պահանջման ամենուր հոգումների տեղիք էր տալիս: Հատկապես շրջանային կենտրոններում թուրքերի և հայերի միջև տեղի ունեցած զինված ընդհարումներ, մասնավանդ երբ վերջինները զայրություն ու դառնությամբ տեսաւում էին, որ ազատ շրջում էին իրենց ազգակցների կոտորածն ու ոչնչացումը գլխավորողները:

1919 թ. հոկտեմբերի 25-ին անգլիացիները տարահանում էին Մարտաշը, Այնժապը, Քիլիսը և այլ բնակավայրեր, որոնք միաժամանակ գրավվում էին ֆրանսիական զինված ուժերի կողմից: Վերջին պարագան է՝ ավելի արագացնում էր հայերի վերադարձը հատկապես այն առումով, որ ֆրանսիան երաշխիքներ էր տվել Կիլիկիային ինքնավարություն տալու մասին: Նվազ դեր չէր խաղում քրիստոնյա և քաղաքակիրթ Արևմտութիւն հանդեպ այն վրատահությունը: «Թշնամական գրավված հողերի բարձր քոմիտեր» ֆրանսիացի գրնադարները իրենց անվանել էր «Կիլիկիո վարչապետ», իսկ «խաչերության ու վկումի ահավոր շրջանն վերջ, անոնք, որ կիսավեր ենտված էին կյանքի փորթորկայից դուռներուն առջև, կսփոփկեն հայերների անկախության երազով...»¹⁵:

Կիլիկիայի ընդարձակ տարածքում չորս հարյուր կիլոմետր երկարությամբ շրջանում, որն ընդգրկում էր Մերսինից մինչև Ուրֆա քաղաքները, տեղաբաշխված էին ֆրանսիական, զրոյի տակ գտնվող 3 ֆրանսիական, 3 սենեգալյան, 3 ալժիրյան, 3 հայկական և 1 սրբական գնդեր: Ընդամենը 20 հազար մարդ:

Հայերի աշակցության դիմաց Համաձանականների «Երկրորդ» պետությունը՝ Ֆրանսիան, խոստանում էր գրավման գործողության հաջող ավարտից հետո Կիլիկիան հանձնել հայերին: Այդ կապակցությամբ Ֆրանսիայի ծերակույտի արտաքին գործերի հանձնաժողովի ընդունած որոշման մեջ ասվում էր. «Ֆրանսիան դաշնակցների համաձանակությամբ պետք է ա-

պահովի ճնշված ժողովուրդների ազատությունը և ամենից առաջ Հայաստանի և Ստորիքի ազատությունը», իսկ Միլիայում և Կիլիկիայում Ֆրանսիական Հանրապետության Գերագույն քույտներ զորավար Անրի Գուրոն հավաստում էր. «Կիլիկիան հայուն դարավոր հայրենիքն է: Կիլիկիան ազատագրվեցավ հայ կամավորներուն թափած արամբ, ուստի Կիլիկիան հայուն պիտի ըլլառ»¹⁶:

Դյուրահավաստ հայ ժողովուրդը ղթքախտաբար հավատաց Արևմտութիւններին: Կիլիկիայի հայերը, հոգմերի և այլ քրիստոնյա փոքրամասնությունների հետ, իրենց կիսավեր եկեղեցիների ավերակների վրա սպահանդեսները վերածում էին զոհաբանական աղոթքների՝ ի փաս հայ ժողովորի «նոր փրկարարների», իսկ բաց հավաքավայրերում և ողջակի փողոցներում տարերային միտինգներ էին տեղի ունենում, ճառեր ու երգեր էին լսվում:

Ոգերուված հայերը լծվեցին վերաշինական ծավալուն աշխատանքների, որպեսզի «Տավրոսը Մասիսին կապող և հայ արյունով գեղազարդված ծիածանը, ի սիյուռս աշխարհի ցրված Հայության համար ըլլա Ավետյաց երկիրը՝ Ամբողջական և Անկախ Հայաստան առաջնորդող սյունը»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, հայությունը վերացնելու և ազգաբնակչության համամասնությունը բիրու ուժով փոխելու թուրքական քաղաքականությունը Կիլիկիայում հաջողություն չունեցավ: Ցեղասպանները չկարողացան երկրամասում բնակվող հայերի թիվը պակասեցնել, քանզի եղեններ հետո այն աճել էր կայսրության այլ վայրերից տարագրված ու վերապրած հայերի հաշվին:

Սահակ Բ կաթողիկոսի մտահոգությունների մեջ առաջնանդարթ տեղ էր գրավում հայոց լեզվի ու դպրության սիստեմի ստեղծումը: Նրա հովանակորությամբ գործում էին նախկինում գոյություն ունեցող բազմաթիվ, ինչպես նաև նոր բացված սահմանական դպրոցները, ազգօգուտ հաստատությունները, բնակավայ-

¹⁶ Գ. Բ. Ղարիբջանյան, Հայ ժողովորի ազատագրական պատմագրական պատմագրը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Ե., 1986, էջ 74:

¹⁷ Տիւ Անդրանիկ Կենճյան, Սոցիալ-դեմոկրատ Հանչական կուսակցությունը և Կիլիկիան ինքնակարգության ակտը, Բեյրութ, 1958, էջ 280:

¹⁸ Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիո, Կոնդակներ և նայրական խոսքեր..., էջ 63—64:

ուրեմն ու տնտեսությունները: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում լրացնության ցանցի խնդիրներին: «Տարագրության և չարդի շրու տարիներու ընթացքին ամենամեծ անավոր հարվածը կրողներն մին եղավ հայ դպրոցը: Նոր սերունդներ շատեր այդ տարիներու ընթացքին զորկ դպրոցն և դաստիարակություններ, թափառական անապատներու և օտար երկիրներու մեջ մոցան և ույսիսկ իրենց մայրենի լեզուն, և հարվարդիքան որդեգրել օտար լեզուներու գործածությունը»¹⁹:

Սղբառության և տառապանքի պայմաններում ապրող կիլիկիաների ավագ սերունդի մեծ մասը անձանոթ էր հայկական արուրենին, քանզի «թուրքը պարտադրած էր իր լեզուն, արդիած էր մերը, վարած էր յորքացումի քաղաքականությունը ու մեր մեջ մասը շարդերներ առաջ ենթակած էր ապրտակ ջարդի»²⁰:

Սկզբունքների, թուրքախոս այդ հայերը չեն մոռանում իրենց ազգային ավանդությունները և, չնայած նյութական ծառը պայմաններին, իրենց երեխաներին ուղարկում էին կաթողիկոսի հովանակությանը ատեղնկած հայկական դպրոցներ: Ասման Բ-ը իր քաղաքացիական առաջին պարտականություններից էր համարում օգնությունը «վիրավոր յոշեց հման փողոցներու և աղբյուրներու մեջ թափառող բրուրավոր անպաշտպան, ընտանեցրկը որբերու և որբութիւններու երանելու»²¹:

Տարագրությունից վերադարձած, «մենած կարծված հայք ուտելու հաց չուներ, հագվելու հագուստ չուներ, բայց ուներ հոգեկան անուն պահանջ, հոգեկան սեղունի պահանջը»²²: Անհրաժեշտ էր առաջին հերթին վերականգնել ոչ միայն դպրոցները, այլև եկեղեցիները, ազգային ու մշակութային օջախները:

Կաթողիկոսի կոչով, եղենական մղձա-

վաճից վերապրողները, նախքան իրենց ավերիս տունն ու տնտեսությունը վերականգնելը, ձեռնամուկ եղան իրենց ամենց շատ տառապած զավակների՝ որք և անօգնական մասուկների կրթության ու դաստիարակության օջախների՝ դարդոցների որքամցների ստեղծմանը:

Կիլիկիանայության տագեապալի օրերին ծերուեազարդ կաթողիկոսը միջոցներ էր ձեռնարկում ժողովրդի վերքերը դարձնենալու համար: Այդ հպատակով նա 1919 թ. փետրվարին նյութական միջոցների հանգանակություն է ձեռնարկում Կաթիրեոս:

Սահմակ կաթողիկոսը ֆրանսիական հշիանությունների հետ բանակցություններ էր վարում երկու մեծ դժվարությունների հայրանարման համար: Դրանցից առաջնն էր «վեսանոց հատուցման կենսական խնդիրը, կարենալ անհրաժեշտ դրամագույնի գործիք և արոր ու եզներ ունենալու համար, և մյուսն է տեղ-տեղ տիրող հիվանդագին ու անապահով դրությունը»²³:

Սուլրուի զինադադարից հետո անցած մեկ և կես տարում Փարիզի հաշտության կոնֆերանսը փորձում էր եզրակետ գրտել «մի կողմից Թուրքիայի բաժանման համաձայնագրերի և մրու կողմից հույսների, հայերի, արաբների և քրդերի պահանջների միջև: Մինչ քարտեզի վրա նորատարածքներ էին բաժանվում և պետություններ էին ստեղծվում, բուն Թուրքիայում քաղաքական ու ուղմական իրավիճակը փոխվում էր»²⁴ անընթատ: Փարիզի և Քեն է Օրսեի հիստերի դահիճների և Կիլիկիայի միջև հեռավորությունը օրեցօր մեծանում էր, չնայած Ֆրանսիայի ու Անգլիայի միջև 1919 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով Կիլիկիայում անզիջական զորքերին փոխարինում էին ֆրանսիական զորքերը:

(Ծարունակելի)

¹⁹ Նոյնը, էջ 58:

²⁰ Թ. Թորանյան, Մարտի Ազգ. Մետրոպան կենք. երկան վարժարանը 65 տարի հայ սկրոնելու ծառայության մեջ, Հայուն, 1988, էջ 18:

²¹ Տե՛ս Կիլիկիան կակիծներ, էջ 97:

²² Թ. Թորանյան, Աշխ. աշխ., էջ 18:

²³ Սահմակ Բ կաթողիկոս Կիլիկիո, Կոնդակներ և հայրական խորքի..., էջ 59:

²⁴ Վ. Թեսդրոպոլս, Թուրքերը և մենք (հունարև լեզվով), 1988, Աթենք, էջ 102:



«ЭЧМИАДЗИН»

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (АПРЕЛЬ 1990 г.)

1. Армения—боль и любовь человечества (редакционная)—(стр. 3—5).

2. Пасхальная проповедь Католикоса всех армян Вазгена I в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 15 апреля 1990 г. (стр. 6—7).

3. Энциклика Католикоса всех армян Вазгена I по случаю 75-ой годовщины Геноцида армян, 3 марта 1990 г., № 1671 (стр. 8—10).

4. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за апрель месяц (стр. 11—12).

5. Архивные документы 1912—1920 гг. об

армянской действительности из Государственного Архива Армении (стр. 13—44).


6. Н. Тер-Микаэлян—Один из исторических эпцикликов. Помещена эпциклика Католикоса всех армян Георга V от 3 августа 1918 г., направленная императору Германии Вильгельму II (стр. 45—49).

7. Агапи Насилян—1915 г. и английские армепофилы (исследование)—(стр. 50—55).

8. Амбарцум Казаросян—Патриотическая деятельность Католикоса Киликийского Домна Сака II и армянский парод Киликий (исследование)—(стр. 56—60).

„ETCHMIADZIN“
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1990)

1. Armenia: Pain and love of humanity (editorial)—(pp. 3—5).
2. Sermon of Holy Easter of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 15-th April 1990 (pp. 6—7).
3. Encyclical of His Holiness on the occasion of the 75-th anniversary of the 1915 Genocide, 3-rd March 1990, No 1671 (pp. 8—10).
4. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of the church festivities in the Holy See during the month of April 1990 (pp. 11—12).
5. Archival documents of 1912—1920 about the Armenian question from the archives of the Armenian Republic (pp. 13—44).
6. N. Der Mikaelian—«A historical encyclical». Encyclical of Gevorg V, deceased Catholicos of All Armenians, dated 3-rd August 1918, addressed to the emperor of Germany Wilhelm II (pp. 45—49).
7. Akaby Nassibian—The year 1915 and the British armenophiles (study)—(pp. 50—55).
8. Hambartzoom Ghazarossian—The patriotic activity of Sahak II, deceased Catholicos, and the armenians of Cilicia (study)—(pp. 56—60).



“ETCHMIADZINE”

ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE (AVRIL 1990)

1. **Editorial:** «Arménie: peine et amour de l'humanité» (pp. 3—5).

2. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 15 avril 1990 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête pascale (pp. 6—7).

3. Encyclique No 1671 de Sa Sainteté publiée le 3 mars 1990 à l'occasion du 75e anniversaire du génocide de 1915 (pp. 8—10).

4. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'avril 1990 (pp. 11—12).

5. Documents des années 1912—1920 relatifs à la question arménienne provenant des archives de la République d'Arménie (pp. 13—44).

6. N. Der-Mikaélian—«Une encyclique historique» (l'encyclique du 3 août 1918 du feu catholicos Guévorg V adressée à l'empereur d'Allemagne Guillaume II (pp. 45—49).

7. Akaby Nassibian—«L'année 1915 et les armenophiles anglais» (étude)—(pp. 50—55).

8. Hambartzoum Grazarossian—«L'activité patriotique du feu catholicos Sahak II et les Arméniens de Cilicie (étude)—(pp. 56—60).